


Դ. Դանիել

Առաջի պատճենահանու  
յանցուածութեան զանց

9(5)  
Դ-85



5 OCT 2011

Պ. ՊԱՍՏԵՎԱԾ

ԱՐԱՋԻՆ  
ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ  
ՏՈՒՆԳՈՒԶԱԿԱՆ  
ԶՈԿԱՏԸ



9 (5)  
7-85

ՀՊԱՀ  
1937

9(5)  
Պ-85  
աւ

Դպրոցական  
թագավորություն

ԱՌԱՋԻՆ  
ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ  
ՏՈՒՆԳՈՒԶԱԿԱՆ  
ԶՈԿԱՏԸ

2-րդ իրատարակությունից  
բարգմանեց Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

402340

986

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎԱՆ ՅԵՐԿՐԱՑԻՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՎՈՒԹՅՈՒՆ «ԳՐՈՅ»  
ՈՒԽՏՈՎ-ԴՈՆ - 1937



17986

## ԱՌԱՋԱԲԱՆ

Ընկ. Պոստիշենի հիշողությունները կարմիր պարտիգանների զեռավոր Արևելքում մղած պայքարի մասին սպիտակ գվարդիականության և հականեղափոխության դեմ, անկասկած, հետաքրքրական էն մեր բանվորական և կոլխոզային յերիտասարդության համար:

Այդպիսի դրքերը մեզ հարկավոր են, վորաչեսզի սոցիալիստական շինարարության ճակատում յերիտասարդության մղած պայքարը կապվի այն ամբողջ պայքարի հետ, վորն այդ շինարարությունից առաջ տարել և կուսակցությունն ու բանվոր դասակարգը շահագործողների դեմ՝ խորհրդային իշխանության հաղթության և ամրապնդման համար:

Կարմիր գվարդիայի, պարտիզանական ջոկատների և կարմիր բանակի հերոսական պայքարն ապահովեց խորհրդային իշխանության հաղթանակը հայրենի և ոտարերկրյա հականեղափոխության և սպիտակ գվարդիականության հանդիպության մասին՝ «Մեր հաղթությունները կազմակերպողի բարձր պատիվը, — ասում ե ընկեր Ստալինը, — պատկանում ե մեր յերկրի առաջաջոր բանվորների մեծ կունկարիվին՝ Ռուսաստանի կոմունիստական կուսակցությանը»։ Միմիայն կուսակցության ղեկավար ւթյամբ և, վոր Խորհրդային Ռուսաստանի բան-

Վորներն ու գյուղացիները կարողացան հաղթանակը տանել քաղաքացիական կռվի բոլոր ճակատներում։ Հեռարկելիյան յերկրամասի կուսկազմակերպություն-ները ղեկավարում եյին պարտիզանական ջոկատների ամբողջ պայքարը Հեռավոր Արեվելքում։ Հեռարկելիյան կուսակցական կազմակերպության պատմությունը, խորհուրդների իշխանության համար ինտերվենտների և սպիտակ գվարդիականների դեմ մղված քաղաքացիական կռվի ժամանակաշրջանում, սերտորեն կապված ընկեր Պոստիշեի անվան հետ։

Պավել Պետրովիչ Պոստիշես, վոր հանգիսանում ե Հեռավոր Արեվելքի պարտիզանական շարժման ամենա-ականավոր քաղաքական ղեկավարն ու վողեվորողը, ցայ-տում գծերով, իրեն հատուկ պարզությամբ արտացոլում ե իր հիշողությունների մեջ Առաջին Տունգուզական պարտիզանական ջոկատի հերոսական պայքարը, վոր բնորոշիչ ե Հեռարկելիյան յերկրամասի պարտիզանական բովանդակ շարժման համար։

Ոյս գրքույկն ընկ. Պոստիշեի այն հիշողություններն են, վոր 1923 թ. մարտի 3-ին սղագրվել են Զի-թա քաղաքի կենտրոնական կուսակցական ակուֆը՝ կողմից և վոր միայն վերջին ժամանակներում հայտնաբերել ե Կուսպատը Հեռյերկոմի ՀԿ(թ)կ կուսակցական արխիվում։

Ընկ. Պոստիշեի այս գրքույկը մի թանկարժեք ավանդ ե, վոր տրվում ե մատաղ սերնդի ձեռքն իրու հեղափոխական պայքարի վեհ տրադիցիաների մի հուշարձան։ Սակայն սրանով չի սպառվում նրա նշանակությունը։ Սա պարունակում ե մի շարք թանկարին նկատառությունը։ Սա պարունակում ե մի շարք թանկարին այն պատմագիրների համար, վորոնք ուսումնասիրում են Հեռավոր Արեվելքում տեղի ունեցած քաղաքացիական կռիվը։


ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ

ՏՈՒՆԳՈՒԶԱԿԱՆ

ԶՈԿԱԾ





«Զայրագնարար կողացին թլրակները. հըաբորբոք,  
յեռացող լավայի և ման շնչեց տայգան<sup>1</sup>:»

Ամուր գետի ջրերն իրենց ալիքներով տանում և  
ծփում եյին պայքարի մարտակ'չը՝ խորհուրդների իշ-  
խանության համար:

Լեռնաշղթաների և բլրակների գլխին ծածանում եր  
կարմիր դրոշը, աշխատանքի դրոշը, Բարձրանալով  
ձյունապատ գագաթներին, մետեղը արագությամբ  
գլորվում եր նա ներքեւ և անհետանում հուժկու մար-  
տականչով ազմկող տայգայում ասիս փրփրագեղ ծո-  
վային ալիքներում:

Այրվող գյուղերի շողքերում արտացոլում եյին  
զինված բանվորների, գյուղացիների հսկայական սի-  
լուետները (ուրվանկարները): Մարմնով հյուծված,  
բայց հոգով արի մարտիկների շարանը ձգվում եր  
տայգայի արահետներով. նրանք գնում եյին կովելու  
վաղեմի թշնամու՝ կապիտալի գեմ:

«Անե՛ծք դահիճներին», — հնչում եր տայգայի խոր-  
քերից և, զարնվելով ժայռերին, արձագանքում եր  
աշխարհով մեկ:

Ա: զոր զայրուցիթով եր զալարվում սպիտակների  
քարաշեն քաղաքը՝ նորանոր տանջանքներ, նորանոր  
պատուհաններ նյութելով ուժեղ դղբղացող տայգային:

<sup>1</sup> Տայգա կոչվում են Սիբիրի ընդարձակ, խիտ և յերբեմ  
ահճային անտառները: (Ծան. քարգ.):

իսկ կարմիր դրոշն ավելի ևս բարձրանում, ավելի  
ևս բոցավառվում եր արյունաներկ կրակով։ Տայգայի  
դղրդոցը, միսացող լավայի նման, ավելի և ավելի մոտ  
եր սոդում սպիտակների քաղաքին։

«Ման դահիճներին»—հնչում եր դաշտերում ու ձո-  
րերում—«Ման արյունարբու յեկորներին»—արձա-  
գանք եյին տալիս բլրակները։ «Դեպի կորի գեպի  
կորիվ», հնչում եր տայգայի մարտականչի արձա-  
գանքը։

¶. ¶.



Ընկերներ, յես առաջուց ներողություն եմ  
խնդրում, վոր իմ այս թուուցիկ, միայն հիշողու-  
թյամբ վերաբարպակած, հուշերի մեջ կարող են  
վորոշ անձառություններ լինել։

1918 թվին չեխոսլովակներն արդեն գրավել  
եյին կրամնոյարսկն ու Իրկուտսկը։ Կարմիր-  
գվարդիականները, Սիբիրի խորհուրդների կենտ-  
րոնական Գործադիր Կոմիտեյի<sup>1</sup> հետ, նահանջել  
եյին վերիններուդինսկ։ Չեխերը շարունակում  
եյին իրենց հարձակումը։ Կարմիր գվարդիան,  
անընդհատ կոիմներում, մշտապես զիմադրում եր  
չեխերին։ Կատաղի եյին մանավանդ այն կոփվ-  
ները, վոր կարմիրգվարդիականները մղում եյին  
չեխերի գեմ Բայկալ լճի ուայնում։ Ուսուրյան  
և ամուրյան բանվորները, Վլադիվոստոկի մոտերքը,  
կարմիր ուագմաճակատ ելին պահում սպիտակ-  
գվարդիականների դեմ։

<sup>1</sup> Վոր կընատված կօչվում եր կենարոնասիրի։

Ոգոստոսի վերջերին, ռազմաճակատից, Վլադիվոտոկի մոտերքից, տեղեկություններ ստացվեցին ճապոնական զորքերի առաջին ջոկատների յերեվալու մասին. սրանք պաշտպանում ելին: սպիտակների հարձակումը կարմիրների դեմ: Նույն ժամանակում Հեռավոր Արևելքի ժողովրդական կոմիսարների խորհուրդը գումարեց բանվորական, գյուղացիական և զինվորական պատգամավորների յերկրային համագումար: Այս համագումարում մի հարց եր գրված. ի՞նչ անել այսուհետեւ, յերբ Խրկուտսկից չեխերն են հարձակում, իսկ Վլադիվոտոկից՝ ճապոնացիների ոգնությամբ, սպիտակ զգարդիականները:

Կենտրոնասիրիցիներն առաջարկում եյին մեր զորքերին առանձին-առանձին ջոկատների բաժանվել ու անմիջապես պարտիզանական կոիվ ծավալել և՛ Խրկուտսկից հարձակող չեխերի, և՛ Վլադիվոտոկից արշավող սպիտակզգարդիականների, և՛ ճապոնացիների դեմ: Հաղթանակեց մյուս տեսակետը, վորի արտահայտողն եր Կրասնոշոկովը — Հեռավոր Արևելքի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահը. սա առաջարկում եր կարմիրզգարդիական ջոկատներին տուն արձակել, իսկ հեռարևելյան կառավարությունը, ինչպես և կառավարական հիմնարկների մի մասը փոխադրել Սփորհնիյ քաղաքը: Այս համագումարից առաջ ել Կենտրոնասիրիցի ներկայացուցիչները հեռարևելյան ընկերներին առաջարկում

եյին կազմել միասնական կարմիր հրամանատարություն այն պայմանով, վոր թշնամիների դեմ պարտարը մղվի հեռարևելյացիների և սիրիցիների համակենտրոնացյալ, միացյալ ուժերով, բայց Կենտրոնասիրիցի այս առաջարկը հեռարևելյացիների կողմից մերժվեց:

Յերկրային համագումարն ինձ և ուրիշ միքանի ընկերների ուղարկեց ռազմաճակատ, վորպեսզի զորամասերը, կազմակերպված լեղանակով, գուրս հանենք ռազմադաշտից, վորպեսզի ռազմակատի բարոյալքման առաջն առնենք. միքան, վոր կարող եր սպառնական լինել հենց իրենց՝ կարմիրզգարդիականների համար: Բայց արդեն ուշ եր: Մեր զորամասերը նահանջում եյին սայլերով, իսկ նրանց կրնկակոխ հետապնդում եյին սպիտակ զորքերը:

1918 թվի սեպտեմբերի 3-ին կարմիրզգարդիականների եշելոնը, վոր բաղկացած եր Բլագովեշենսկի բարձողներից և մետաղագործներից, ինքնահոս կերպով ռազմաճակատից Խաբարովսկ մեկնեց: Նրան կասեցնելու վոչ մի հնարչկար:

Սեպտեմբերի 4-ին, յերեկոյան, եշելոնը Խաբարովսկից ուղիղորդվեց գեպի Բլագովեշենսկ



հետեւալ լողունգով՝ «Պաշտպանել Ամուրյան  
մարզը մոտեցող թշնամուց»:

Խաբարովսկից յես դուրս յեկա այս Եշելոնի  
հետ և թողեցի նրան Վոլոչայեվկա կայարանում:  
Եշելոնը ճանապարհ ընկավ դեպի տուն, իսկ յես  
ընտանիքիս հետ նավեցի Տունգհուզկա գետով ու  
կանգ առա Շամանկա գյուղում, վոր յերկու  
հարյուր կիլոմետրի չափ հեռու յե Խաբարովսկից:  
Շամանկան 10—15 տնից բաղկացած մի փոք-  
րիկ գյուղ ե խուլ տայգայում: Այս գյուղում  
յես ապրեցի վեց ամիս: Այս ժամանակ սպիտակ  
գվարդիականներն իրենց վայրագություններն  
եյին անում Խաբարովսկում՝ ատաման Կալմիկովի  
գլխավորությամբ: Պարտիզանական շարժման  
մասին դեռ վոչինչ չեր լսվում: Լինում եյին  
դեպքեր, յերբ հանդիպում եյինք այս ու այն  
ընկերոջը — տայգայում թագնվող նախկին կար-  
միրգվարդիականներին, այս ու այն պատասխա-  
նատու աշխատավորներին և մասնավորապես ընկ.




Հչեպետնովին (կարծեմ Հե-  
ռավոր Արևելքի ժողովրդա-  
կան լուսավորության կոմի-  
սար եր), վորին հետագյում  
ծանր հիվանդ վիճակում բռնել  
եյին սպիտակլզվարդիական-  
ները (յեթե հիշողությունս  
ինձ չի դաշտանում — Վոս-  
տորգովկայում) և, ինչպես

պատմում եյին գյուղացիները, սպիտակները ջրա-  
հեղձ եյին արել սառցածակում:

Խաբարովսկի գրավող սպիտակներն իրենց  
վայրագություններն սկսեցին նրանով, վոր ամե-  
նազգվելի յեղանակով գնդակահարեցին իմպերիա-  
լիստական պատերազմի նախկին ռազմագերիներին  
(մաջառներին), իսկ հետո՝ Խաբարովսկի բան-  
վորներին:

Շուտով սպիտակներն իրենց բանակի համար  
զորահավաք հայտարարեցին: Համարյա ամբողջ  
յերիտասարդությունը, վոչ միայն բանվորա-  
կան, այլև գյուղացիական յերիտասարդությունը  
կտրականապես խույս տվեց այս զորահավաքից:  
Սկսեց սպիտակների բռնությունը: Սպիտակների  
պատժիչ ջոկատներն սկսեցին գյուղերը չափչիել:  
Բանվորները տայգա փախան: Սպիտակների  
բռնություններից զերծ մնալու համար գյուղա-  
բունությունների համար համար համար համար  
կան յերիտասարդությունն ել զենքը ձեռին տայ-  
գա փախափ: Տայգայում թագնվող յերիտասար-  
դա հայրերին, մայրերին ու կանանց:

Սպիտակներին դիմադրելու տրամադրությունը  
գյուղացիների մեջ աճում եր վոչ թե որ-ավուր,  
այլ ժամ առ ժամ: Յերիտասարդությունը, վոր  
թափառում եր տայգայում, արագ կերպով սկսեց



արձագանք տալ կոչին, կազմակերպվել պարտիզանական ջոկատներում և շարունակել կոփիթ սպիտակգվարդիականների և ինտերվենտների հետ խորհուրդների իշխանության համար։ Այսպես ծայր առան սկզբում փոքրաթիվ ու վատ զինված պարտիզանական ջոկատները։

Պարտիզանական ջոկատների կազմակերպումը, այդ ջոկատների ուժերի հավաքումը կատարվեց շատ արագ։ Արդեն 1919 թվի մարտին Մերձծովյան ամբողջ շրջանում (Պրիմորյե) կային միքանի տասնյակ պարտիզանական ջոկատներ։ Սպիտակները շատ զգույշ եյին դառել, տայգայի խորքերը չեյին մտնում, վախում եյին հեռավոր

գյուղերից, իսկ Ուսուրյան և Ամուրյան յերկաթագծի ուղղությամբ ցրված ճապոնական զորքերն ստիպված եյին ուժեղացնել և ամրացնել յերկաթուղային կայարանների իրենց կայազորը, ստիպված եյին դադարեցնել յերկաթուղային յերթեվեկությունը գիշերով, իսկ իրենց եշելոնները ցերեկով եյին առաջ մղում յերկաթուղով, այն եւ միայն գիտակալ շոկեկառքերի հսկողությամբ։

Մեր առաջին Տունգուղական<sup>1</sup> պարտիզանական ջոկատը ծնվել է 1919 թվի կեսերին Արխանգելովկա<sup>2</sup> գյուղում, իվան Պավլովիչ Շեվչուկի հրամանատարությամբ։

Ուկրայինական գյուղացի բեռնիչ բանվոր իվան Պավլովիչ Շեվչուկն աչքի յեր ընկնում իր խոչոր կազմակերպչական ընդունակությամբ, խիզախությամբ ու անվեհերությամբ։ Խուրհուրդների իշխանության համար մղվող պայքարում այս մարդը, քաղաքացիական կափվերի ընթացքում, հսկայական դեր խաղաց Հեռավոր Արևելքում։ Նրա անունը գիտեյին բոլոր գյուղացիները՝ յերեխաներից սկսած մինչև յոթանասուն տարեկան ծերունիները։

<sup>1</sup> Տունգուղական պարտիզանական ջոկատն իր անունն ստացել է Խաբարովսկ գավառի Տունգուղական վուստից, վորն իր մեծ մասով զանվում է Ամուր գետի ձախ վտակի՝ Վ. Տունգուղկայի ափին։

<sup>2</sup> Արխանգելովկա գյուղը, զոր կոչվում են նաև Տիֆոնտայեկուա, գանգում և Տունգուղկա գետի մոտ։ Վոլաչայեկա կայարանից 10 կիլոմետրի չափ հեռավորության վրա։



Տունգուղական պարտիզանական ջոկատն սկզբ-նական շրջանում բաղկացած եր յերեսունի չափ մարդուց, վհչ ավելի: Այս ջոկատը կազմակերպեց և իր «նախատորմիղը», վոր նախապես նախակներից եր կազմված, իսկ հետո ճարվեց նաև շոգենավ:

 Առաջին որերը ջոկատի խնդիրն եր պաշտպանել Տունգուղական ռայոնի գյուղացիներին սպիտակ գվարդիականների հանկարծակի վրա տալուց ու գաղանություններից: Ու վորքան արագ և ուժգին աճում եր պարտիզանների դիմադրությունն սպիտակգվարդիականներին, այնքան ավելի սանձարծակ, այնքան ավելի արյունաբու եյին դառնում սպիտակգվարդիական կալմիկովի բանդաները: Յես հիշում եմ, թե ինչպես կալմիկովականներն արշավեցին Նիկոլայեվկա գյուղի վրա: Նիկոլայեվկա գյուղը Վոլոչայեվկա<sup>1</sup> կայարանից ութը կիլոմետրի չափ հեռավորության վրա յեր: Կալմիկովականները հավաքեցին գյուղացիներին, տողան-տողան շարեցին նրանց ու տաս-տասնինդ ըռպեյի չափ հրացանների բերաններն ուղղեցին նրանց վրա, իսկ հետո յուրաքանչյուր յերկրորդին, չնայած վհչ տարիքին

<sup>1</sup> Խաբարովսկից մատ հիսուն կիլոմետր դեպի արեմուտք:

և վհչ ել սոցիալական վիճակին, մտրակներով ծեծեցին:

Դեպի տայգա՝ պարտիզանների մոտ, յերիտասարդության մոտ փախան նաև ծերունիները: Գյուղացիների համար ազատության միակ հույսը կարմիր պարտիզաններն եյին:

1919 թվի առաջին կեսն եր:

Այդ ժամանակ պարտիզանական ջոկատներ արդեն շատ կային ինչպես Մերձծովյան, այնպես ել Մերձամուրյան շրջանում:

Կային ջոկատներ, վորոնց կազմի սեջ պարտիզանների թիվը յերբեմն համում եր միքանի հարյուրի:

Պարտիզանական ջոկատները տարերայնորեն չեյին կազմակերպվում, նրանց պայքարն ինքնապաշտպանության մի միջոց չեր այլևս: Պարտիզանական ջոկատներ կազմակերպողները բոլշեվիկներն եյին: Իսկ այն ջոկատները, վոր կազմակերպվել եյին առանց բոլշևիկների, հետո ձեվավորվում եյին բոլշևիկների ձեռքով ու քաղաքականապայման նրանց ղեկավարության տակ եյին գտնվում: Պայքարը տարվում եր «Խորհուրդների իշխանության համար» լոգունգով:


Խորհուրդների իշխանության համար մզկող պարտիզանական պայքարը բացառիկ նշանակություն ուներ Հեռավոր Արևելքում: Պարտիզանական ջոկատների մեջ մտել եյին Մերձծովյան և Մերձամուրյան շրջանների քաղաքների համար-

յա բոլոր բանվորները։ Զոկատների հիմական կորիզը բանվորներն եյին հանդիսանում է Հետագայում պարտիզանական շարժումն ընդդրկեց գյուղացիական ամբողջ մասսան։ Հարկավ, բանվորների այդ միահամուռ համախմբմանը պարտիզանական ջոկատներում չափազանց նպաստեցին վոչ միայն գյուղացիների ու բանվորների գլխին սպիտակների հասցրած ամենաքստմնելի վայրագությունները, այլև յերկյուղն այն մասին, վոր յերկիրը կարող են զրավել ոտարազգիները՝ ճապոնացիները, ամերիկացիները, չիները, զորոնց դեսանաներն այդ ժամանակաշրջանում գտնվում եյին Հեռավոր Արևելքում, և վորոնք ոգնում ելին սպիտակներին թե՛ ամունիցիայով (հանդերձանքով), թե՛ զենքով և թե՛ մթերքներով, ինչպես նաև ակտիվ մամնակցությամբ կարմիրների դեմ մղվող զինված պայքարում։

Սպիտակների ու ճապոնացիների գազանությունները բնորոշելու համար առաջ կբերեմ միքանի փաստեր։

Դեմնյովկա գյուղում սպիտակներն սպանեցին գյուղի տանուտերին, այնքան ծեծեցին յոթանասնամյա ծերունուն, վոր նա մեռավ։ Ավերվում, ամայանում եյին ամբողջ գյուղեր։ այրվում, վոչնչացվում եր գյուղացիների վողջ ունեցվածքն ու տավարը։

Արխանգելովկա գյուղում սպիտակների՝ գյուղացիներին հասցրած տանջանքները սոսկալի



յնուշիթ կրեցին. Աննկարագրելի խոշտանգումների յենթարկվեցին, ապա ծեծի տակ մահացան չորս ժերունիք: Դյուղի տանուտերը, իմպերիալիստական պատերազմի մի ինվալիդ, գյուղական դպրոցի պահապանն իրենց ընտանիքի աչքի առջև շարչարվեցին ու սպանվեցին: Իր ընտանիքի աչքերի առջև տանջվեց ու սպանվեց Տունգուզական պարտիզանական ջոկատի հրամանատարի ոգնական ընկ. Շեշչուկի ալեվոր հայրը՝ Միքանի ծերունիներ (վորովհետև գյուղում յերիտասարդներ չեյին մնացել) կախաղան հանվեցին. նրանց կողերը ձղել եյին թրերով ու բացված վերքերի մեջ սառած գալաձկներ եյին խրել:

Մեր ջոկատը վճռեց իր թիվը պարտիզաններով լրացնել. դրա համար մորիլիզացիայի յենթարկվեց գյուղացի բնակչությունը: Յես ընտրված եյի Տունգուզական վոլոստի նախագահ. 1919 թ. սկզբին յես, իրու նախագահ, Վուստորգովկա գյուղում գումարեցի վոլոստի համագումար.

Այս համագումարում վոլոստի բնակչությունը պարտիզանական ջոկատի շտաբին խոստացավ կերակրել ջոկատին, պարտավորվելով յուրաքանչյուր տնից տալ յերկու և կես կիլոգրամ թխած հաց, սատակարարել հարկավոր չափով կեր, ուզգած ժամանակին, հենց վոր պահանջվի, հայթայթել սայլեր: Համագումարի վորոշմամբ, Տունգուզական պարտիզանական ջոկատը համալրելու

համար, մորիլիզացիայի յենթարկվեցին վեց հարյուր մարդ, թեև մեր ջոկատում վեց հարյուր մարդու համար զենք չեր բավականանում:

Վոստորգովկա գյուղի մոտերքը մենք գրավեցինք սղոցարանային գործարանի պահեստը: Այս պահեստում մեր ձեռքն ընկավ յերկու հարյուր տոնն վարսակ, վոտնամաններ, վալենկիններ, սղոցներ, կացիններ, թաթպաններ և այլ իրեր, վոր այնքան անհրաժեշտ եյին ջոկատին:

Մեր ջոկատը վոգի առավ: Ջոկատին կից կազմակերպեցինք կարի արհեստանոց, ուր կարում եյինք վոտնաման, հագուստ. կազմակերպեցինք նաև հացի փուռ և մինչև անգամ տնապարի ձեռվ մի կաշեգործարան:

Վոլոչյակվսկ կայարանի և Արխանգելովկա գյուղի մեջ, տայգայում, բարաք-զորանոց շինեցինք: Բարաք-զորանոցն այնպես եր շինված ու քողարկված, վոր անփորձ աչքերով դժվար եր նրան նկատելը:

Ջոկատին կից գործում եր քաղբաժինը: Քաղբաժնի աշխատանքը բավական ծանր դրության մեջ եր. չկար հեկտոգրաֆ, թուղթը քիչ, իսկ գրող մեքենայի մասին մտածելն ել ավելորդ եր: Բայց մենք գյուղացիներին ուղղված կոչեր եյինք զլում, թուղթիկներ եյինք բաց թողնում: իսկ այս կոչերն ու թուղթիկները բազմորինակելու համար ընտրեցինք ամենագրագետ ընկերություն այն պարտիզանների միջից, վորոնց մեծ մասը կիսա-

ժակձկեցինք այն, բայց ճապոնացիների գնդացիներից տեղացող կրակը հեղեղում եր մեզ: Մեզնից մեկն սպանվեց, յերկուսն ել վիրավորվեցին: Նահանջեցինք: Մյուս որը պարզեցինք, վոր զորանոցում յեղել ե ընդամենը յոթանասուն մարդ, վորոնցից վաթսուն հոգուց ավելին սպանվել են. ասել ե թե մենք բնաջինջ եյինք արել ամբողջ կայազորը և, այդ մասին տեղեկություն չունենալով, նահանջել եյինք: Ճիշտ ե, գնդացիրների կրակը մեզ լավ դադեց: Փորձեցինք կրկնել գրոհն այդ զորանոցի վրա, բայց նրա կայազորն արդեն համարված եր ու ավելի լավ ել սպառազինված: Հարկ յեղավ կրկին նահանջել: Այսպես, ուրեմն, մեզ չհաջողվեց ձեռք գցել վոչ նրանց դեղերը և վոչ ել վարսակը:

Ելի մի քանի շատ բնորոշ որինակներ 1-ին Տունգուզական պարտիզանական ջոկատի մարտական գործողություններից:

Խաբարովսկում եր գտնվում Ա. Առուր գետի նավատորմիղի այսպես կոչված բազան: Մենք վորոշեցինք հարձակում գործել այդ բազայի վրա ընկ. Շեվչուկի ջոկատների, ինչպես և մեր հարեվան ռայոնում գործող ընկ. Կոչնեվի ջոկատի միացյալ ուժերով (Կոչնեվը յերկաթուղային բանվոր եր, 2-րդ Տունգուզական ջոկատի հրամանատար):

Հարձակումից առաջ խորհրդակցություն ունեցանք. քննարկեցինք, թե ինչպես պետք ե հար-

ձակվենք, մշակեցինք գրոհի պլանը և այլն: Նիստը տեղից ամբողջ գիշերը. քննարկեցինք, վիճեցինք ու վերջապես վորոշեցինք հարձակում գործել նույն բազայի վրա:

Խորհրդակցությունից հետո, լուսադեմին, նըստեցինք նախաձաշելու:

Խորհրդակցությունը կայացավ Արխանգելովկա գյուղում, 1919 թվի դեկտեմբերի 16-ին լույս 17-ի գիշերը, մեր 1-ին Տունգուզական ջոկատի հրամանատար Իվան Պավլովիչ Շեվչուկի տանը: Նրա տնակը մի շատ փոքրիկ բան եր, չնայած վոր Իվան Պավլովիչը մեծ ընտանիքի տեր մարդ եր: Յերեխաները ցանուցիր պառկած ելին հատակին. մեկը խոմքում եր վառարանի զվին. Շեվչուկի կրնն եր միայն, վոր հոգ եր տանում մեր մասին, սեղանի վրա շարում եր թեյ, կարտոֆիլ, չորացրած կետաձուկ: Այդ միջոցին, խորհրդակցությանը մասնակցողներից մեկը, պատուհանին նայելով, գոչեց. «Ո՞եզ շրջապատել են կազակները»: Բոլորս վազեցինք դեպի սպացակալած փոքրիկ պատուհանները. ճիշտ-վոր, կազակները շրջապատել եյին տնակը: Իսկույն վազեցինք ու վերցրինք հրացաններս: Կոչնեվը անմիջապես դուրս թռավ գեպի բակը ու ծղոտեցանկապատի միջով դնդակի մի հարվածով գետին գրորեց կազակներից մեկին: Սկսեցինք բոլորս կրակել, կազակները տնակից հետ քաշվելին:

ժակծեցինք այն, բայց ճապոնացիների գնդացիրներից տեղացող կրակը հեղեղում եր մեզ։ Մեզնից մեկն սպանվեց, յերկուսն ել վիրավորվեցին։ Նահանջեցինք։ Մյուս որը պարզեցինք, վոր զորանոցում յեղել ե ընդամենը յոթանասուն մարդ, վորոնցից վախտուն հոգուց ավելին սպանվել են. ասել ե թե մենք բնաջինջ եյինք արել ամբողջ կայազորը և, այդ մասին տեղեկություն չունենալով, նահանջել եյինք։ Ճիշտ ե, գնդացիրների կրակը մեզ լավ դադեց։ Փորձեցինք կրկնել գրոհն այդ զորանոցի վրա, բայց նրա կայազորն արդեն համալրված եր ու ավելի լավ ել սպառագինված։ Հարկ յեղավ կրկին նահանջել։ Այսպես, ուրեմն, մեզ չհաջողվեց ձեռք գցել վհչ նրանց դեղերը և վհչ ել վարսակը։

Ելի մի քանի շատ բնորոշ որինակներ 1-ին Տունգուզական պարտիզանական ջոկատի մարտական գործողություններից։

Խաբարովսկում եր գտնվում Ա.մուր գետի նավատորմիղի այսպես կոչված բազան։ Մենք վորոշեցինք հարձակում գործել այդ բազայի վրա ընկ. Շեվչուկի ջոկատների, ինչպես և մեր հարեվան ույոնում գործող ընկ. Կոչնեվի ջոկատի միացյալ ուժերով (Կոչնեվը յերկաթուղային բանվոր եր, 2-րդ Տունգուզական ջոկատի հրամանատար)։

Հարձակումից առաջ խորհրդակցություն ունեցանք. քննարկեցինք, թե ինչպես պետք ե հար-


ձակվենք, մշակեցինք գրոհի պլանը և այլն։ Նիստը տեվեց ամբողջ գիշերը. քննարկեցինք, վիճեցինք ու վերջապես վորոշեցինք հարձակում գործել նույն բազայի վրա։

Խորհրդակցությունից հետո, լուսադեմին, նըստեցինք նախաճաշելու։

Խորհրդակցությունը կայացավ Արխանգելովկա գյուղում, 1919 թվի դեկտեմբերի 16-ին լույս 17-ի գիշերը, մեր 1-ին Տունգուզական ջոկատի հրամանատար Իվան Պավլովիչ Շեվչուկի տանը։ Նրա տնակը մի շատ փոքրիկ բան եր, չնայած վոր Իվան Պավլովիչը մեծ ընտանիքի տեր մարդ եր։ Յերեխաները ցանուցիր պառկած եյին հատակին. մեկը խոմքում եր վառարանի գլխին. Շեվչուկի կինն եր միայն, վոր հոգ եր տանում մեր մասին, սեղանի վրա շարում եր թեյ, կարտոֆիլ, չորացրած կետաձուկ։ Այդ միջոցին, խորհրդակցությանը մասնակցողներից մեկը, պատուհանին նայելով, զոչեց. «Ծեզ շըջապատե՞ր են կազակները»։ Բոլորս վագեցինք գեպի սառցակալած փոքրիկ պատուհանները. ճիշտ-վոր, կազակները շըջապատել եյին տնակը։ Իոկույն վագեցինք ու վերցրինք հրացաններս։ Կոչնեվը անմիջապես դուրս թռավ գեպի բակը ու ծղոտեցանկապատի միջով գնդակի մի հարվածով գետին գլորեց կազակներից մեկին. Սկսեցինք բոլորս կրակել, կազակները տնակից հետ քաշվեցին։

Մեր ջոկատի հրամանատար Իվան Պավլովիչ  
Շեքսուկը գլխաբաց թռավ շթամքած ձին ու  
ոլացավ դեպի իր ջոկատը:

Ջոկատը գտնվում եր գետնափոր զորանոցում,  
գյուղից չորս կիլոմետրի չափ հեռու:



Մենք դուրս թռանք խրճից ու ցրվեցինք  
կաղնու թփուտներում: Դեպքը կատարվում եր  
ձմեռը: Մի որ առաջ վարսակի համար այս  
գյուղն եյին յեկել միքանի պարտիզաններ Կոչ-  
նեկի ջոկատից: Մեր ջոկատից ել քսանի չափ  
մարդ լողանում եյին նույն գյուղի բաղնիքում:  
Յերեք բոպե անց ամենքը վոաքի եյին ու ցրվե-  
ցին փոքրիկ գյուղի բոլոր կողմերը: Սկսեցին  
կրակել կազակների վրա: Կազակները նահանջե-

ցին գյուղի արվարձանը՝ Տունգուզկա գետի ձախ  
ափի ուղղությամբ: Այստեղ գրավեցին մի բար-  
ձունք, վորպեսզի կարողանան տեսնել թե ինչ  
ե կատարվում գյուղում, վորտեղից են կրակում:  
մեկ խոսքով՝ գրավեցին իրենց համար ըստ յերե-  
վույթին ամենաձեռնտու դիրքը: Այդ պահին Շեք-  
չուկը հասավ իր ջոկատին, վոտքի հանեց բոլոր  
պարտիզաններին և, մոտավորապես 60—70 մար-  
դուց բաղկացած ցանցառ շղթա կազմած, անցավ  
կաղակների թիկունքը: Հակառակորդի աչքում  
այնպիսի տպավորություն ստեղծվեց, վոր նա  
շըջապատված ե կարմիրների մեծ ուժերով: Խու-  
ճապին սկսվեց, թշնամին՝ առանց կոփին ընդունե-  
լու՝ նահանջեց:

Սպիտակների հարձակումից յերկու որ անց  
մենք յենթարկվեցինք ճապօնացիների գրուին.  
Նրանք մեր դեմ կազմակերպել եյին պատճիչ  
արշավախումբ: Այնուհետև մեր ջոկատն սկսեց  
նահանջել դեպի Կալինովկա գյուղը, ուր կոչնեվի  
ջոկատն եր:

Սակայն ջոկատն ամբողջ կազմով չեր նահան-  
ջում: Նրա մի մասը քաշվեց դեպի Վոստորգովկա  
գյուղը, վորը լրացուցիչ զորահավաք կատարեց  
գյուղացիների մեջ: Ջոկատի այս մասը, զորա-  
հավաքի յենթարկված ծեր ու յերիասարդ,  
առողջ ու հաշմանդամ գյուղացիների հետ գնաց  
միանալու Շեքչուկին:

Մի ուրիշ դեպք:

Մի գիշեր, Վոստորգովկա գյուղում սոսկալի իրարանցում ընկավ։ Այսպիսի դեպքերում գյուղացիները սովորաբար ձի նստում և իմաց եյին տալիս հարեվան գյուղին։ սա յել իր հերթին



լուրը հացնում եր հետեւյալ գյուղին, և այսպես, շղթայի ձևով, լուրը համում եր պարտիզանական ջոկատի բանակած տեղին, վորով և հաղորդվում եր կամ տագնապալից վիճակը կամ թրշնամու յերեվան գալը։ Այս իսկ կերպով պարտիզանները կապ հաստատեցին իրենց մեջ, վորովինեւել վոչ հեռագիր կար և վոչ հեռախոս։ Այս կապն իրականացվում եր գյուղացիների միջոցով և կոչվում եր «կենդանի կապ»։

Սպիտակգվարդիականների հինգ հարյուր մարդուց բաղկացած ջոկատն իսկ-վոր յեկավ վոստորգովկա։

Այս գյուղում կալին տասներկու պարտիզաններ։ Յերեխանները, կանայք և ծերունիները հեռացել եյին գյուղից ու փախել եյին մերժավոր տայգան, ուր և մնացել եյին մոտավորապես խարեք որ և յերեք գիշեր։ Նրանք ահագին խարույկներ եյին վառել ու քուրքերով, սուշտակրույկների եյին վառել ու գիշեր։ Նրանք այսպիս վարով, վերմակներով և կիսամուշտակներով փառերով, վերմակներով և կիսամուշտակներով փառեթված նստել եյին այստեղ, սպասելով, վոր

կամ սպիտակները կհեռանան գյուղից կամ կգան կհասնեն մեր կարմիր պարտիզանական ջոկատները։ Սպիտակգվարդիական ջոկատը՝ տեսնելով, վոր գյուղում վոր-վոչ չկա, վոչնչացրեց այն բոլորը, ինչ-վոր կարող եր վոչնչացնել։


Հեռավոր Արևելքում տեղի ունեցած պարտիզանական պայքարը դեռ վոչ-վոք ինչպես հարկն ե չի նկարագրել. իրականում տեղի ունեցածի հարյուրերորդ մասն ել չի նկարագրված գրքերում։ Գրված ե շատ բան, բայց կցկառուր։ Գրվածքների շատերում չափազանց մեծ տեղ ե տրված սուբյեկտիվիզմին։

Դա մի իսկական պայքար եր, բանվորների և աշխատավոր գյուղացիների պայքար խորհուրդների իշխանության համար Հեռավոր Արևելքում։

Տայգացի մարտիկներին վոգեվորողն ու գորավիգ հանդիսացողը հերոսական այն պայքարն եր, վոր տանում եյին խորհրդային Ռուսաստրանում բանվորներն ու գյուղացիները։

Հեռավոր Արևելքի կարմիր պարտիզաններն իրենց թիկունքում զգում եյին Ռուսաստանի մարտնչող բանվորների ու գյուղացիների հակայական աջակցությունը։ Ատաման Սեմյոնովի ձեռքով Ռուսաստանի կենտրոնից կտրված և արեւելքից առաջ խաղացող դալմուխների ու ճապոնացիների կրակե ողակով Անդրբայկալում սեղմված, նրանք կովում եյին հերոսաբար։

Հեռավոր Արևելքում կան շատ անհայտ գեղեցիկաններ, ուր ննջում են բանվորների ու գյուղացիների խորհուրդների համար մարտնչող լավագույն, ամենից առաջավոր, ամենից դիսավիթ հերոսները։ Հեռավոր Արևելքում չկա համարյակոչ մի յերկաթուղային կայարան, վոր վողող-



ված չինի խորհուրդների իշխանության համար պայքարող պարտիզանների արյունով։

Պարտիզանական պայքարը Հեռավոր Արևելքում—զա բառի ուղղակի իմաստով պարտիզանականություն չեր։ Դա կազմակերպված մի պայքար եր. նրան կազմակերպողը կոմունիստական կուսակցությունն եր, վոր և իր ներկայացու-

ցիչների ձեռքով ղեկավարում եր նրա գործունեյությունը։ Պարտիզանական ջոկատների կորիզը բոլշևիկյան եր, — մի առողջ կորիզ, վորի կազմի մեջ մտնում եյին և բանվորներ, և գյուղացիներ։

Հեռավոր Արևելքում մնացել ելին բազմաթիվ ուազմագերիներ. — և պետրոգրադցիներ, և իվանովցիներ և մուկվացիներ, և տուլացիներ, վորոնց կոլչակն եր գերի վերցրել Կոլչակի այդ նախկին ուազմագերիները, բանվորներն ու գյուղացիները, վորոնք կոլչակի ու Կալմիկովի «մահվան վագոններում» պատահարար եյին փրկվել մահվան ճիրաններից, անցան մեր կողմը, մտան մեր պարտիզանական ջոկատները։

Հեռավոր Արևելքի բանվորներն ու գյուղացիները լավ գիտեն Լազո Սերգեյի, Սերիշեվ Ստեփանի, Մուխինի, Տրիլիսերի, Շեվչուկի ի. Պ., Շեվչենկո Գավրիլի, Յակիմով Մակարի, Բոյկո. Պավլովի, Ֆլեգոնտով Ալեքսեյի, Կոչնեվ Ալեքսեյի անունները։

Միտքս են գալիս ճապոնացիների և սպիտակների գեմ հետապայում կազմված կանոնավոր ճակատում գործող մերձծովյան հետեյալ պարտիզանների և մարտիկների անունները՝ Շեպտյուկ Ֆյոդորի, Կոխ Միխայիլի, Պոպկոյի, Պոպով Նիկիֆորի, Յարոշենկո Ֆեֆրեմի, Վելեժեկ Սերգեյի, Պշենիցին կ., Վոլնըյի, Մելնիկով Բորիսի, Զասիմուկի, Տետերին-Պետրովի, Սոկրատ

Կրուչինայի, Պեղների, Սոկոլով Ալեքսանդրի  
(ոպազմաճակատային դատարանի առաջին նախագահի), Սեմիկորովկինի, Սլինկինի, Լունեվի,  
Զյուլկովի, Մուչնիկի, Նմանապես և հետեւալ  
անկուսակցականների անունները - Իյա Գոլովաչեվի և Խրենովի (ցարական բանակի նախկին  
սպաներ), Սմիրնովի («Կեպոչկա» — այսպես  
եյինք կոչում նրան. հետագայում նա հրամանա-  
տարն եր տանկերի այն դիվիզիոնի, վոր մենք  
յերկաթուղային բանվորների ոգնությամբ գաղտ-  
նաբար փախցրինք-տարանք Վլադիվոստոկից) և  
տամյակ ուրիշ մարտիկ ընկերներ, վորոնց անու-  
նը լավ հայտնի յե Հեռավոր Արևելքի բանվորնե-  
րին ու գյուղացիներին:

Պարտիզանական շարժումը Հեռավոր Արե-  
վելքում աջակցություն եր գտնում աշխատավոր  
գյուղացիության ամենալայն խավերում. Յեվ-  
ուրիշ կերպ չեր կարող լինել: Սպիտակգվար-  
դիական դահճների գաղանություններն ավելի  
ևս սերտորեն ի մի զոդեցին բոլոր աշխատավոր  
գյուղացիներին ու բանվորներին, հանուն խոր-  
հուրդների իշխանության մարտնչողների միաս-  
նական ընտանիք կազմելու համար: Գյուղացու  
յերիտասարդ վորդին, վոր պարտիզան ե, ձիով  
արշավում ե իր գյուղը՝ հորը տեսնելու համար.  
այնտեղ նա գտնում ե միայն հրկիզված տունը,  
կամ կախաղան հանգած հորը, կամ սպանված  
մորը: Այդ գյուղացի պարտիզանը, լաց լինելու

փոխարեն, ել ավելի պինդ եր սեղմում իր ձեռ-  
քերում հրացանը, մտիկ եր տալիս գոտկից կախ  
գցված նոնակին ու հետ եր սլանում իր ջոկա-  
տը՝ նորից կովի մեջ նետվելու, թշնամուց վրեժը  
հանելու համար:

Կանայք մեր լավագույն հետախույզներն  
եյին: Շատ սիրով և ջերմությամբ եյին վերա-  
բերում նրանք պարտիզաններին, իրենց վերջին  
ունեցածից բաժին եյին հանում նրանց: «Դուք  
մեզ համար եք նահատակվում», — արտասուրն-  
աչքերին ասում եյին նրանք, յերբ պարտիզան-  
ները տայգայից զյուղ եյին գալիս:

Յուրաքանչյուր պարտիզանական ջոկատ ուներ  
իր կարմիր դրոշը, վորի վրա գրված եյին ջոկատի  
անունը և այս լոգունգները. «Ամբողջ իշխանու-  
թյունը խորհուրդներին», «Կեցցե՛ բանվորա-գյու-  
ղացիական իշխանությունը», «Կեցցե՛ լենինը»:

Հետագայում չկար այնպիսի պարտիզանա-  
կան ջոկատ, վորի մեջ կոմունիստներ չլինեյին:

Բոլոր հարցերը ջոկատը վորոշում եր ընդ-  
հանուր ժողովներում: Նա յեր դատում առան-  
ձին ընկերներին՝ նրանց կատարած հանցանքների  
և վոճիրների համար, նա յեր վորոշումներ և դա-  
տավճիռներ արձակում: Բայց այստեղ ևս առա-  
ջատար և վճռական դերը կոմունիստներն եյին  
խաղում: Ասածներս հաստատելու համար յես  
առաջ կը երեմ մի փաստ 1-ին պարտիզանական  
Տունգուզական ջոկատի կյանքից:

Կրուչինայի, Պելքների, Սոկոլով Ալեքսանդրի (ուղմաճակատային դատարանի առաջին նախագահի), Սեմիկորովկինի, Սլինկինի, Լունեվի, Զյուլկովի, Մուչնիկի, նմանապես և հետեւյալ անկուսակցականների անունները - իլյա Գոլովաչեվի և Խրենովի (ցարական բանակի նախկին սպաներ), Միրնովի («Կեպոչկա» — այսպես եյինք կոչում նրան. հետագայում նա հրամանատարն եր տանկերի այն դիվիզիոնի, վոր մենք յերկաթուղային բանվորների ոգնությամբ գաղտնաբար փախցրինք-տարանք Վլադիվոստոկից) և տասնյակ ուրիշ մարտիկ ընկերներ, վորոնց անունը լավ հայտնի յե Հեռավոր Արևելքի բանվորներին ու գյուղացիներին:

Պարտիզանական շարժումը Հեռավոր Արեվելքում աջակցություն եր գտնում աշխատավոր գյուղացիության ամենալայն խավերում: Յեվուրիշ կերպ չեր կարող լինել: Սպիտակգվարդիական դահիճների գաղանություններն ավելի ևս սերտորեն ի մի զողեցին բոլոր աշխատավոր գյուղացիներին ու բանվորներին, հանուն խորհուրդների իշխանության մարտնչողների միանական ընտանիք կազմելու համար: Գյուղացու յերիտասարդ վորդին, վոր պարտիզան ե, ձիով արշավում ե իր գյուղը՝ հորը տեսնելու համար. այնտեղ նա գտնում ե միայն հրկիված տունը, կամ կախաղան հանված հորը, կամ սպանված մորը: Այդ գյուղացի պարտիզանը, լաց լինելու

փոխարեն, ել ավելի պինդ եր սեղմում իր ձեռքերում հրացանը, մտիկ եր տալիս գոտկից կախ գցված նոնակին ու հետ եր սլանում իր ջոկատը՝ նորից կովի մեջ նետվելու, թշնամուց վրեժը հանելու համար:


Կանայք մեր լավագույն հետախույզներն եյին: Շատ սիրով և ջերմությամբ եյին վերաբերում նրանք պարտիզաններին, իրենց վերջին ունեցածից բաժին եյին հանում նրանց: «Դուք մեզ համար եք նահատակվում», — արտասուբն աչքերին ասում եյին նրանք, յերբ պարտիզանները տայգայից գյուղ եյին գալիս:

Յուրաքանչյուր պարտիզանական ջոկատ ուներ իր կարմիր գրոշը, վորի վրա գրված եյին ջոկատի անունը և այս լոգունգները. «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին», «Կեցցե բանվորա-գյուղացիական իշխանությունը», «Կեցցե Լենինը»:

Հետագայում չկար այնպիսի պարտիզանական ջոկատ, վորի մեջ կոմունիստներ ըլինեյին:

Բոլոր հարցերը ջոկատը վորոշում եր ընդհանուր ժողովներում: Նա յեր զատում առանձին ընկերներին՝ նրանց կատարած հանցանքների և վոճիրների համար, նա յեր վորոշումներ և դատավճիռներ արձակում: Բայց այստեղ ևս առաջատար և վճռական գերը կոմունիստներն եյին խաղում: Ասածներս հաստատելու համար յես առաջ կրերեմ մի փաստ 1.ին պարտիզանական Տունգուղական ջոկատի կյանքից:

Զոկատի հրամանատար ի. Պ. Շեվչուկը մեծ ժողովրդականություն ունեցող մարդ եր. հոկայական հեղինակություն եր վայելում. Յես հիշում եմ, վոր մի անգամ ջոկատը համակարծիք չեղավ նրա հետ այն դերի մասին, վոր վերապահել եր



նա ջոկատի դատավճիռները փոխելու և հաստատելու հարցում: Կոմունիստները հակառակ ելին հրամանատարի միանձնյա իշխանությանը դատաստանական գործերում: Յեզ ջոկատը պաշտպանեց կոմունիստների տեսակետը: Ճիշտ ե, հետագայում մենք այս հարցում զիջեցինք մեր հրամանատարին: Մակայն այս փաստն ել գալիս ե վկայելու, վոր պարտիզանական ջոկատներում առաջատար դերն անպայման կոմունիստներն

ելին խաղում: Մեր ջոկատում կար մի կոմունիստ-պարտիզան—Մերգեյ Վելեժեվ, վոր առանձնապես աչքի յեր ընկնում իբրև ռազմական գործերին լավատեղյակ մարդ: Զոկատի հրամանատարը խիստ հաշվի յեր առնում նրան և միշտ խորհրդակցում եր հետը ռազմական հարցերի մասին: Կոմունիստները պետք ե շատ ճկուն լինելին ջոկատներում, անկուսակցական հրամանատարների ինքնասիրությանը չպետք ե կպչելին, պետք ե կարողանային ինքնասիրության և գործի միջին ճանապարհը գտնել, և այս նրանց միշտ հաջողվում եր:

Միակ բանը, վոր յերբեմն չեր հաջողվում կոմունիստներին,—դա այն եր, վոր նրանք չելին կարողանում զսպել կատաղած գյուղացի պարտիզաններին, վորոնք, տեսնելով սպիտակների կատարած վայրագություններն իրենց գյուղերում և շեներում, յերբեմն վրեժինդրությունից դրդված, ինչպես մեզ թվում եր, չափն անցնում ելին: Բայց և այն ժամանակ, յերբ մենք հարցը զնում ելինք քաղաքական տեսակետից, պարտիզանները հասկանում ելին մեր դիրքավորումը և համաձայնում ելին մեզ հետ: Յես հիշում եմ, թե ինչպես նույն Տունգուզական ջոկատում զալմուխների Վայրենի գիվիզիայից մենք գերի վերցրինք տունգուզական գյուղացիների ամենակատաղի թշնամիներից միքանի մարդ: Մեր ձեւքը գերի ընկան վեց վիրավորներ: Մենք համոզեցինք

պարտիզաններին, վոր գերիներին հարկավոր ե  
ազատել, թող գնան քաղաք ու պատմեն, թե ովքեր  
են այստեղ կովում, ի՞նչ բանի համար են կովում  
և թե ինչպես են վարվել իրենց հետ պարտիզան-  
ները: Պարտիզանները մեզ հետ համաձայնեցին:

Այստեղ հիշեմ մի պատկեր, վոր բնորոշում ե  
պարտիզանների՝ սպիտակների հետ ունեցած  
տայգայական ծանր պայքարում ցուցաբերած  
անսահման հերոսությունը, նրանց տոկունու-  
թյունը, ուշիմությունը և անվրդովությունը: Մի  
անգամ ընկ, կոչնեվի ջոկատի պարտիզաններն  
ուղեկցում եյին քսան սայլից բաղկացած մի  
գումակ: Առջելից գնում եր հետախուզական  
խուժքը, վորի դեմ հանկարծ գուրս յելան ճապո-  
նացիները: Հրացանները հորիզոնագիր ուղելով,  
ճապոնացիները հարցրին. «Ո՞վ եք»: Մեր աղերքը  
պատասխանեցին. «Սպիտակ կազակներ ենք»:  
Ճապոնացիների մեջ սպիտակ սպաներ կային,  
Սպաներից մեկը հարցրեց. «Իսկ ուր են ձեր ու-  
սպիրները»: Մերոնք պատասխանեցին. «Մենք  
գնում ենք վտանգավոր ճանապարհով, ուր շատ  
պարտիզաններ կան: Վորպեսզի կարծեն, թե մենք  
իրենցից ենք, ուսադիրներս վերցրինք, գրպան-  
ներս գրեցինք»: Սպան հրամայում ե. «Յույժ  
տվեք ուսադիրներդ»: Այս խոսակցությունը մի  
ըսպե չտևեց: Մերոնք անմիջապես ձեռներն  
առան հրացաններն ու կրակեցին ճապոնացիների  
վրա: Մի ակնթարթում ճապոնացիներն անհետա-

ցան: Մերոնք դեպի տայգա դիմեցին: Այդ ժա-  
մանակամիջոցում գումակն արդեն շուռ եր յե-  
կել դեպի հետ և արագությամբ սլանում եր  
տայգայի ուղղությամբ: Այս բոլորը կատարվեց  
մի ակնթարթում: Տայգայից սկսեցին կրակեր:  
Ճապոնացիները սիրտ չարեցին տայգան մտնե-  
լու: Այս գումակում գյուղացի բեռնողների հետ  
միասին ընդամենը տասնյոթ մարդ կար:

Ահա և ուրիշ դեպքեր:

Մեզ մոտ մի ծերուկ պարտիզան կար, Վա-  
սիլե ազգանունով, վաթուն տարեկանի մոտ,  
առողջ, բարձրահասակ, հրաշալի պահպանված մի  
մարդ: Նա մեր ջոկատում գումակի պետն եր: Մի  
անգամ ընկ. Վասիլեը տայգայի միջով գնում եր  
իր ջոկատը Վոստորգովկա գյուղից: Ճանապարհին  
վրա հասավ գիշերը: Նա վորոշեց գիշերել մոտակա  
ձմեռոցում (ձմեռոցը խրճիթ ե տայգայում): Վա-  
սիլեը վառարանը վառեց, ներսից ամուր կող-  
պեց դուռը, տաքացավ և, յերկի, քնեց: Լուսա-  
բացին այս տեղովիս անցան սպիտակգվարդիա-  
կանները և սկսեցին ձմեռոցի դուռը թակել: Վա-  
սիլեը (մենք այս իմացանք սպիտակգվարդիա-  
կանների ջոկատից մեր կողմն անցած այն շար-  
քայինների պատմածներից, վորոնք, կարծեմ,  
նույնպես ուզմագերիներ եյին և վորոնց պար-  
տագիր յեղանակով իրենց ջոկատն եյին քաշել  
սպիտակները), գոռաց, «Ո՞վ ե այդտեղ»: Նրան  
պատասխանեցին, «Իսկ դու ով ես»: — «Յես

կարմիր եմ», ասաց Վասիլես: «Ա՛, կարմիր ես», —և սկսեցին դուռը ջարդել:

Ըսկեր Վասիլես վորոշեց վողջ-վողջ անձնատուր չլինել և հրացանը կրակեց իր քունքին: Սպիտակները ջարդեցին դուռը, խուզարկեցին հերոսաբար ընկած Վասիլեսի դին և հրդեհեցին ձմեռոցը:

Մենք հետո տեսանք հրդեհված խրճիթը, հավաքեցինք ընկ. Վասիլեսի վոսկըները և այսաեղել տայգայում, թաղեցինք այրված ձմեռոցի մոտ:

Նման գեպքերը հազվագյուտ չեյին: Պարտիզաններն անձնատուր չեյին լինում վոչ միայն այն պատճառով, վոր վախենում եյին թշնամու սոսկալի տան ջանքներից, այլև նրա համար, վոր անպատճություն եյին համարում վողջ-վողջ թշնամու ձեռքն ընկնել:

1919 թվի ձմռանը Վոստորգովկա գյուղը յեկավ յերեք-չորս հարյուր (լավ չեմ հիշում) մարդուց բաղկացած կալմիկովականների ջոկատը: Ատաման Կալմիկովը պարտադիր կարգով սպիտակ գվարդիականների այս ջոկատի համար մորիլիցացիա յեր արել բանվորներին և ազատված նախկին ռազմագերի կարմիրբանակայիններին, վորոնց Կոլչակն եր գերի վերցրել Սիրիում, և վորոնք պահվում եյին Խաբարովսկի ճամբարներում: Կալմիկովը ուզում եր կարմիր պարտիզանների դեմ ոգտագործել գերված կարմիրբա-

նակալիններին, իսկ այս վերջինները չեյին հրաժարվում մտնել Կալմիկովի սպիտակգվարդիական ջոկատը միայն նրա համար, վոր լինդիր եյին դրել՝ ինչ գնով ել լինի կոնցենտրացիոն ճամբարից դուրս պրծնել և պարտիզանների կողմն անցնել:

Այս ջոկատում կային նաև Վայրենի դիվիզիայից կալմիկովականներ՝ մարդակերպ-գաղան-ներ:

Ջոկատը մնաց գյուղում գիշերն անցկացնելու: Ջոկատն ուներ մի լեռնային թեթև հրետանի և մեկ կամ յերկու հատ գնդացիր: Այդ պահին մեր պարտիզաններից (5—8 մարդ) մի քանի հոգի մնացել եյին Վոստորգովկա գյուղում գիշերելու: Կալմիկովի ջոկատն ընկած կարմիրբանակային ռազմագերիները հաստատ վորոշել եյին մեր կողմն անցնել. դրա համար նրանք ամեն կերպ աշխատում եյին գյուղում գտնել մի մարդ, վոր իմանար, թե ուր ե գտնվում պարտիզանների այս կամ այն ջոկատը Նրանց նպատակն այն եր, վոր այդ իմանալուց հետո սպանեյին իրենց սպիտակգվարդիական հրամանատարներին և ապա հեռանային ու միանային պարտիզանական ջոկատին: Դրա համար նրանց հարկավոր եր իմանալ ճանապարհը, ջոկատի բանակած տեղը և այն: Բայց գյուղում մնացել եյին միայն կանայք և յերեխանները. մեր տղերանց ի հարկե պահուտեցին: Գյուղացի կնանիք

չեյին կարող պատմել, թե ուր ե գտնվում պարտիզանական ջոկատը, և ամեն կերպ խույս եյին տալիս այդ հարցերից։ Սակայն գեղջկուհիներին տարրինակ եր թվում սպիտակզվարդիական այս ջոկատի վարքը. գյուղի բնակիչների գլխով շատ բան եր անցած. Վոստորգովկան շատ անգամ եր յենթարկվել սպիտակիների հարձակմանը։ Սպիտակզվարդիական ջոկատներն առաջ գյուղ վոր մանեյին, իսկույն սկսում եյի իրենց գաղանությունները, բոնաբարում եյին կանանց, մորթոտում եյին տավարը, նույն տավարի մսից հրամայում եյին կանանց պելմեններ յեփել և այլն։ Բայց այս ջոկատի զինվորներն այսպես չեյին պահում իրենց, ինչպես սպիտակիները. Նրանք խոսակցություն եյին բաց անում խորհրդային Եշխանության մասին, պարտիզանական կոփմերի մասին, քաղաքում տիրող անկարգությունների մասին։ Սակայն այսպես խոսում եյին առանձնաբար, սպաներից գաղտնի, նույնիսկ մեկը մյուսից գաղտնի։

Ինչ վոր ե, կանալք վորոշում են հայտնել թաքնվող պարտիզաններին սպիտակզվարդիականների ջոկատի դրության մասին։ Կանայք հաղորդում են պարտիզաններին, վոր ջոկատն իբրև թե յերկու մասի յե բաժանվել, և մեկ մասը մյուսին հավատ չի ընծալում։ Սպաները նույնպես գլխի յեն ընկնում, վոր իրենք մեծ սխալ են արել, պատժիչ արշավարդին։

Դունելով ամբողջ ջոկատի յերկու յերրորդական մասի չափ նախկին ռազմագերի կարմիրբանակայիններին, ու առանձին յեռանդ չեն ցուցաբերում։

Այս գյուղում թաքնվող մեր պարտիզաններն սկսեցին փորձեր անել՝ կապ հաստատելու համար սպիտակզվարդիական ջոկատի առանձին տղերանց հետ։ Կապը հաստատվեց։ Նրանք պատմեցին իրենց նպատակների մասին, բացատրեցին իրենց բոնած այն պլանը, վոր վորոշել եյին գործ գնել գիշերով՝ իրենց հրամանատարական կազմի նկատմամբ։ Մերոնք խիստ գրուշությամբ սկսեցին հարցուփորձ անել, թե ինչ ուժեր ունեն նրանք, ինչ մարդիկ են, թե արդյոք նրանց մեջ բանվորներ, նախկին ռազմագերի ծանոթներ չկան։ Բանից գուրս յեկավ, վոր մեր պարտիզաններին ծանոթ և նույնիսկ շատ լավ ծանոթ միքանի մարդ գտնվեցին։ Այս բոլորից հետո միայն գյուղում թաքնվող պարտիզաններն սկսեցին միասնաբար գործել սպիտակզվարդիական ջոկատի մի խումբ տղերանց հետ։

Մերոնց հեշտությամբ հաջողվեց զլուխ բերել գիշերվա իրենց պլանը. սպաներին ջարդուեցին, անվստահելի շարքայիններին զինաթափարին. մի-յերկու հոգի կարողացան փախչել, սրանց թվում նաև միքանի սպա. Հրամանատարական կազմի հետ հաշիվը վերջացնելուց հետո հարցընին, թե ով ուզում ե քաղաք գնալ և ով

գեպի տայգա, պարտիզանների մոտ Միաձայն վորոշեցին պարտիզանների հետ միասին կռվել կալմիկովի դեմ, ու բոլորը ընկ. Շեվչուկի ջոկատն անցան:

Առաջին անգամն եր, վոր մեր ջոկատը ձեռք բերեց թնդանոթ, վոր «լեռնական» ելին կոչում պարտիզանները: Այս թնդանոթը մեզ միշտ շատ մեծ ծառայություն եր ցուց տալիս. նա մեզ դափաճանեց իր կամքի հակառակ 1920 թվի ապրիլի 4-ին և 5-ին, յերբ մեզ համար բոլորովին անսպասելի կերպով Խաբարովսկում հանդես յեկան ճապոնացիները: Յերբ մեր պարտիզանական ջոկատը պետք է կռվող նահանջեր Ամուրի ձախ ափը, մեր «լեռնականը» ջրասույզ յեղավսեփական ոռումբով, ու մենք ստիպված յեղանք ձեռք վերցնել նրանից: 1920 թվի ապրիլի 4-ի և 5-ի արյունահեղ որերի մասին կպատմեմ ստորեւ: Այս որերը մանավանդ անմոռանալի յեն Խաբարովսկի, Վլադիվոստոկի, Նիկոլսկ-Ուսուրիյսկի բանվորների համար:

Կարծեմ, 1920 թվի հունվարին, յերբ կոլչակն արդեն ջարդված եր, յերբ պարտիզանական շարժման ահեղ ալիքներն արդեն վողողել ելին վոչ միայն Հեռավոր Արեվելքն, այլև ամբողջ Սիբիրը, ճապոնացիները, վորոնց շղթան ձգվում եր Վլադիվոստոկից համարյա մինչև Բայկալ, զգացին, վոր Կոլչակի ավանտյուրը ձախողվել եւ: Ճապոնացիները տեսնում ելին, վոր բանվորների ու

գյուղացիների որեցոր աճող պարտիզանական շարժումը վոչ միայն իրենք՝ ճապոնացիները, այլև բոլոր յերկների ինտերվենտներն ել վոչ մի գեպքում չպիտի կարողանան հաղթահարել: Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակը հաղթական կերպով առաջ եր ընթանում՝ կռվող պարտիզանների հետ միանալու համար: Ճապոնացիները հարկադրված ելին այսպես կոչված չեղոքություն հայտարարելու: Այս ել պետք ե ասել, վոր նրանց համար վտանգավոր եր հսկայական ճանապարհի վրա այդպիսի ցիրուցանց դիրքեր ունենալը: Նրանք սկսեցին իրենց ուժերը նախ կենտրոնացնել Բլագովեշենսկում, Խաբարովսկում, Նիկոլսկ-Ուսուրիյսկում:

1920 թվի հունվարին ճապոնացիները պաշտոնապես հայտարարեցին իրենց չեղոքությունը և սկսեցին Ամուրի մարզից հեռացնել իրենց զորքերը:

Նույն որը, յերբ մեր ջոկատն իմացավ ճապոնացիների հայտարարած չեղոքության մասին, յես Շամանկա գյուղումն եյի. գնացել եյի ընտանիքիս հետ տեսնվելու:

Յերբ յես արդեն պատրաստվում եյի իմ ջոկատը վերադառնալու, մոտս յեկավ հատուկ ուղարկված սուրհանդակը, կարծեմ ընկ. Խնոկենտին, վոր և հաղորդեց մեզ համար այդ ուրախալի լուրը: Այս սուրհանդակն արդեն հեռվից գոռաց. «Ուռահ, մերոնք հաղթեցին: Կոլչակը

շարդված ե, ճապոնացիները չեզոքություն հայտաբարեցին։ Զոկատը վորոշեց այսոր դուրս գալ տայգայից և բացարձակ կերպով գրավել Ոլգոխտայից<sup>1</sup> մինչև Վոլոչայելվկա ձգվող յերկաթագիծը։

Այս լուրն արդեն հասել եր յերկաթագծի ուղղությամբ գտնված բոլոր գյուղերը. նա կայծակի արագությամբ տարածվել եր տայգայի ամենախուլ, ամենահեռավոր անկյունները։ Մեզ այնպես եր թվում, վոր տայգան ել ուրախակից եր մեր ուրախությանը։ Տայգայի աղմուկը կարծես առաջվա չափ դաժան չեր. հնամյա յեղեղիները և խեժոտ փիճիները, ալեկոր մամուվ պատած, կարծես ավելի սիրալիր կերպով եյին նայում մեզ։ Տայգան, ինչպես ասում եյինք մենք այն որերում, բաց եր արել իր գիրկը հաղթական բանվորների ու գյուղացիների առաջ։

Տասնյակ, հարյուրավոր, հազարավոր, տասնազարավոր պարտիզաններ գնում եյին ամբողջ ջոկատներով, առանձին ողակներով, խմբերով, տունջված, բայց խորհուրդների իշխանության համար մղվող պայքարում կուած ու կոփված։ Անբեխ պատանիները, անվեհեր յերիտասարդ մարտական պարտիզանները, մորուքավոր ալեզարդ ծերունիները — ամենքը գնում եյին հաստատուն, հպարտ բայլվածքով, հրացաններն ու

<sup>1</sup> Ոլգոխտա կայարանը գտնվում է Վոլոչայելվկա գյուղի մոտ։

բերդաններն ուսերից կախ, սառցային յեղյամով պատած։ Ծերերն ուրախությունից յերեսներն եյին խաչ հանում, յերիտասարդներն իրար ձեռք եյին սեղմում, կնանիք՝ սրանց հանդիպելիս՝ համբուրվում ու գրկախառնվում եյին հետները, վնասուում եյին իրենց զավակներին, ամուսիններին և հայրերին։ Մերձակա գյուղերի պարաիզանները դիմում եյին հրամանատարին, վոր թույլ տա նրանց գնալ իրենց կանանց մոտ ու մի-յերկու որ տանը հանգստանալ. «Թեկուզ մի որը թող մերը լինի, նախկին չարքաշ որերի տեղ թեկուզ մի գիշեր առանց վտանգի, հանգիստ անցկացնենք», — ասում եյին նրանք։ Հրամանատարը թույլ եր տալիս, թեև դժվարությամբ։

Բոլշեվիկներն այն ժամանակ ահազին աշխատանք եյին ծավալել՝ աշխատավոր գյուղացիների ամենալայն մասսաներին բացատրելու համար, վոր Կոլչակի պարտությունը դեռ չի նշանակում, թե պայքարն արդեն վերջացավ. այդ դեռ մեր վերջնական հաղթանակը չե։ Մեզ տակավին սպասում ե մի սհազին, հսկայական պայքար, նույնքան դաժան և նույնքան համառ, հափշտակվելու և մանավանդ ուրախանալու տեղիք չկա։ Այս մեր հաղթանակը պետք ե համարել միայն ժամանակավոր դադար, այն ել՝ վոչ յերկարատե։ Մենք պետք ե այս մեր գաղարն ոգտագործենք, պետք

ե ավելի սերտ կերպով կապվենք բոլշեվիկյան կազմակերպությունների հետ, պետք ե ձեռք բերենք ավելի շատ զենք ու մեր պայքարն այնպես վերակառուցենք, վոր պարտիզանական մեթոդից անցնենք ճակատային պայքարի մեթոդներին, ճապոնացիները դեռ մեր յերկրում են, Կալմիկովը դեռ չի ջարդված, Առաման Սեմյոնովն անձեռնմխելի նստել ե Անդր-Բայկալում և վայրագություններ ե անում, Ուրախանար, ի հարկե, կարելի յե, բայց գործն ել չպետք ե մոռանալ», — ասում եյինք պարտիզաններին և մանավանդ յերիտասարդներին:

Մեր ջոկատը դուրս յեկավ տայգայից. ջոկատի շտաբը հաստատվեց, յեթե հիշողությունն ինձ չի դափանում, Վլադիմիրովկա գյուղում՝ ճապոնացիները յերկաթագծի ուղղությամբ ըըռնել եյին Խաբարովսկի մերձավոր ամենակարեվոր կետերը. Բայց նրանք չափազանց անհանգիստ եյին: Նրանք չեյին հավատում, վոր մենք՝ պարտիզաններս՝ կակուղ կվարվենք հետները. Նրանք ուժեղ պահակներ եյին կանգնեցնում զորանոցների և այն կետերի շուրջը, ուր նրանց զորքերն եյին գտնվում: Դիշերները պահակների թիվը յեռապատկվում եր: Նրանք անհամբերությամբ սպասում եյին, վոր կարգադրություն լինի յերկաթուղային գծից քաշվել դեպի Խաբարովսկ, ուր վոր գտնվում եյին նրանց հիմնական ուժերը:

Մեր պարտիզաններն սկսեցին կամաց-կամաց «մոտենալ» ճապոնական զինվորներին: Անա ճապոնա-պարտիզաննական յեղբայրացման միքանի պատկերներ: Ճապոնական զինվորները յերկ-յերկու, յերեք-յերեք մարդ հավաքվում են միասին, աշխատում են ամեն հարմար դեպքում մոտենալ մեր պարտիզաններին: «Դուն բարսուկ ես», այսինքն՝ «Դու բոլշեվիկ ես», — հարցնում ե ճապոնացիներից մեկը: Մերը զլիսով ե անում, «Այս, բարսուկ եմ: Ուզնում ես ինձնից հիշատակ ստանալ այս կարմիր բանտիկը: Յեթե դու բանվոր ես կամ աշխատավոր գյուղացի, — ասում են մեր պարտիզանները, իրենց ասածի իմաստը շարժումներով բացատրելով, — ուրեմն դու ել բարսուկ ես, ահա ստացիր»: Ճապոնացի զինվորը ծիծաղում ե, ուրախ-ուրախ սեղմում ե պարտիզանների ձեռքը, վերցնում ե բանտիկը և շինելի ներսի կողմից քորոցով աստառին ե ամբացնում: «Յես չի կարնա, յես չի կարնա, պետք բարկանա», նույնպես ժեստերով աշխատում ե ճապոնացին բացատրել իր խոսքերը. ճապոնական զինվորը չի կարող բանտիկը ամբացնել աչքի ընկնող տեղում, ինչպես այդ անում են մեր պարտիզանները:

Շուտով կարգադրություն ստացանք Վլադիկոստոկից հալածել ատաման Կալմիկովին, վորն սկսում եր ծլկվել Խաբարովսկից: Մեր ջոկատը

շարժվեց Կարմիր Գետակի<sup>1</sup> ուղղությամբ։ Կալմիկովը նահանջեց Ուսուրի գետով։ Մենք կընկակոխ հետապնդում եյինք նրան, ջարդում և վոչնչացնում եյինք առաջազնաց ջոկատից հետմացած նրա ողակները։ Բայց Կալմիկովին չկարողացանք բռնելու Ուսուրիական կազակները, վորոնք թերեփս իրենց մեծ մասով Կալմիկովի նախկին հենարանն ելին կազմում, տեսնելով նրա կործանումն, սկսեցին միանալ մեզ, համոզված լինելով, վոր հաղթանակը բանվորների և գյուղացիների կողմն եւ Իհարկե, սպիտակգվարդիական ուսուրիական կազակների ամենաթունդ հականեղափոխական մասը նահանջեց Կալմիկովի հետմիասին, իսկ մյուս մասը չինացիների կողմն անցավ։ Այն կազակները վորոնք չեյին ուզում բաժանվել իրենց տնտեսությունից, տեսան, վոր բացի հաղթական բանվորներին ու գյուղացիներին միանալուց, ուրիշ յելք չկա։ Իրենց անձնվիրությունը ապացուցելու և անցյալ մեղքերը քավելու համար նրանք այսպիսի գաղանությամբ, այսպիսի կատաղությամբ հաշիվ եյին տեսնում գերի բռնված կալմիկովցիների հետ, վոր յերբեմն մեր պարտիզանների մարմնով սարսուռ եր անցնում։

Ճշմարիտ եւ մեզ միացած կազակներն իրենց ձեռքով գատաստան եյին կտրում կալմիկովյան զորքերի ամենաարյունարբու մասի՝ Վայրենի

գիվիզիայի գլխին։ Յեվ իսկապես վոր վայրագ, սանձարձակ, այլասերված զիվիզիա եր այն և Կալմիկովի ամենազլիսավոր նեցուկն եր հանդիսանում։ Այդ զիվիզիան լավագույն ցուցանիշն եր այլասերման, ուժասպառության, սանձարձակության և այն բոլոր հատկությունների, վորոնք բույն եյին զրել ամեն տեսակի սպիտակգվարդիականության մեջ։ Կոլչակականությունը, ատամանականությունը, վոր վայրենաբար հաշիվ եր տեսնում իր գատակարգային թշնամու հետ, գալարգում եր իր որհասական ջղաճգություններից։

Մեր ջոկատը, Կալմիկովին չբռնելով, վերադապ Կարմիր Գետակ կայարանը։ Վլադիվոստոկից Խաբարովսկ յեկան այսպես կոչված ժողովրդա հեղափոխական զորքերը։ Սրանք մնացորդներն եյին Կոլչակի այն զորքերի, վորոնք Կոլչակի անկումից հետո անցել եյին բանվորների և գյուղացիների կողմը։ Նրանք, կարծեմ, յերկու գնդից եյին բաղկացած։ Խաբարովսկում արդեն բանվորական իշխանություն եր կազմակերպված, այսինքն հեղկում և բոլոր հարկավոր ատյանները։ Բայց Խաբարովսկում, ինչպես և առաջ, բանակում եր ճապոնական զիվիզիան։ Մեր ջոկատի պարաիզանները, Կոչնեվի ջոկատի պարտիզանները, Բոյկո-Պավլովի ջոկատի պարտիզանները սրտանց փափագում եյին Խաբարովսկ գնալու։ Այսըան ժամանակ ազատ կերպով քաղաքում չեյին յեղել, այժմ զարձյալ թույլ չեն տալի աւ

<sup>1</sup> Խաբարովսկից 20 կիլոմետր դեպի հարավ

Մենք աշխատում եյինք հետ պահել պարտիզաններին քաղաք մտնելուց։ Նախ, մենք կարծում եյինք, վոր այս քաղաքը, ուր գտնվում եր ճապոնական դիվիզիան, մեզ համար թակարդ ե լինելու։ Ճապոնացիներին մենք չեյինք հավատում.



Հավատ չելինք ընծայում նաև ժողովրդահեղափոխական զորքերին, կոլչակի նախկին այն զորքերին, վորոնք մեր կողմն եյին անցել։ Մանավանդ հավատ չունեյինք Վլադիվոսովի վրա, ուր նստած եյին բազմաթիվ մենշևիկներ, եսերներ և բուրժուական ուրիշ զիբիլներ, վորոնք այն ժամանակ Մերձովյան շրջանում գտնվող բոլոր ին-

տերվինտների անպայման հավատարիմ գործականներն եյին հանգիսանում։ Բայց Վլադիվոսովում կում կային բոլշևիկներ, կար ընկ. Լազոն՝ մեր մարդը, վորին շատ եյին սիրում իբրև հերոսի, իբրև անվեհներ մարտնչողի և պարտիզանական հաղթանակներ կազմակերպողի։ Այն ժամանակ Մերձովյան շրջանի ամբողջ պարտիզանական արժման զլուխն եր կանգնած Լազոն։ Այնտեղ



կար նաև կուսակցական բոլշևիկյան կազմակերպություն։

Պարտիզաններին կարմիր Գետակի մոտ պահելը չհաջողվեց։ Դրա համար վորոշեցինք քաղաք մտնելը Ահա մեր քաղաք մտնելու նկարագրությունը։ Առջևից բանվորներն են զրոշներով, ժողովրդի ահազին բազմությունը։ Դուրս են թափվել Խաբարովսկի բոլոր բնակիչները՝ կալմիկովա-

կանների ձեռքով հալածված ու ճնշված։ Հանձին պարտիզանների նրանք իրենց փրկիչներին եյին տեսնում։ Մեր ջոկատում շատ բանվորներ կային Խաբարովսկից։ Պլակատներ, դրոշներ, «ուռայի» աղաղակներ, ուրախության արտասուքներ, ծանոթների և ազգականների հանդիպումներ—այս բոլորը դիտել կարելի յեր նույն պահին։

Զոկատը գնում եր կարգով, ծանր ու հաստատ քայլերով։ Մեր ջոկատի հրամանատար իվան Պավլովիչ Շեվչուկը նստել եր իր մեծ գեղեցիկ նժույգը, ինքն ել յերիտասարդ, քաջառողջ, կարմրայտ, թափամաղ կրծքին, ուսնիվար՝ լայն կարմիր ժապավեն, մի ձեռքում ահազին փափախը, մյուս ձեռքում—թուրք։ Նրա պատվին մեծարանքի ցույցեր են լինում։ Նա աջ ու ձախ խոր գլուխ եր տալիս ուրախությունից հրճված ամբոխին։ Պարտիզանները տանում եյին դրոշները, վորոնց վրա գրված եր. «Ամբողջ իշխանությունը բանվորագյուղացիական և զինվորական պատգամավորներին», «Կեցցեն բանվորագյուղացիական խորհուրդները», «Կեցցե լենինը», «Կեցցե Ռեկ»։

Մեզ դիմավորում եյին գլխաբաց։

Պարտիզանները բրեգենտե գույնզգույն իշխաններ հագած, փափախներով, ականջակալ-գլակներով, կիսամուշտակներով, քուրքերով, արմակներով, յերկար մազերով ու չածիլված, կրծքներին կարմիր բանտեր կպցրած, ուսերին պեսպես

զենքեր՝ բերդան, վինտովկա, ոռուսական, ճապոնական, վորսորդական հրացաններ, ամեն սիստեմի (մառզեր, նազան, կոլտ) ատրճանակներով, նոնակները գոտուց խրած, գլուխները հպարտ վեր ցցած անցնում եյին Խաբարովսկի կենտրոնական փողոցներով և աշխատում ելին ուժգին կերպով տակտ խփել իրենց հաղթական քայլերով։

Մեզ տեղափորեցին փայտե զորանոցներում։ Շեվչուկը, մեր ջոկատի հրամանատարը, կանչեցինձ իր մոտ՝ մի կարեվոր խնդրի մասին խորհելու համար։ Այսորվա պես հիշում եմ. «Քաղաքին չի կարելի հավատ ընծայել,—ասաց նա ինձ։— Մրիկաններ շատ կլինեն այստեղ։ Ճապոնական գորքերի մի ամբողջ դիվիզիա կա այստեղ. իսկ ճապոնացիներին մենք ճանաչում ենք։ Ո՞վ ե, վոր Վագիվստոկում նստած՝ փորձում ե կառավագագիվստոկում։ Պետք չե արդյոք գնալ և տեսնել, Բացի ըել մեզ։ Պետք չե արդյոք գնալ և տեսնել, Բացի ճապոնից, այստեղ (այսինքն Վագիվստոկում—Պ. Պ.) ուզում են բանակցել ճապոնացիների հետ։ Ինչի մասին։ Դրանից հետո Շեվչուկն առաջնին մասին։ «Չեք գնա արդյոք Վագիվստոկի ջարեց ինձ. «Չեք գնա արդյոք Վագիվստոկի Ամեն բան լավ իմացեք, ճանապարհին ել զենք Ամեն բան լավ իմացեք, ճանապարհին ել զենք և փամփուշտ ճարեցեք»։ Յես համաձայնվեցի։ Հետո նա ավելացրեց. «Կմանակցեք այստեղի Յետո բանակցեց. Յեթե մեր սարդիկ աշխատակցություններին, Յեթե մեր սարդիկ աշխատակցություններին հետ, ապա տում են բանակցել ճապոնացիների հետ, ապա այդ բանակցություններն առանց մեզ չեն կարող ունենալ»։ Յես ժպտացի, վորովհետև գիտելի ունենալ»։ Յես ժպտացի, վորովհետև գի-

տեյի, վոր մեր կողմից վոչ մի բանակցություն չկա ճապոնացիների հետ, իսկ յեթե բանակցող կա, ապա դրանք ամեն գույնի սպիտակզվարդիականներն են, վորոնց թվումն են նաև մենշեվիկները:

Գնալ համաձայնվեցինք յես և ընկ. Վասիլին (ազգանունը մոռացել եմ): Ճանապարհ ընկանք գետի Վլագիվոստոկ:

Հասանք: Վլագիվոստոկում տեսնվեցինք մեր ծանոթների հետ. աեսանք Մելնիկով Յորիսին, վոր գտնվում եր Լազոյի մոտ, շտաբում. տեսանք Լազոյին, խոսեցինք, կարծիքներ փոխանակեցինք ու վերադառնք Խաբարովսկ: Դժբախտաբար չեմ հիշում ամսի վոր թվին մենք Խաբարովսկ հասանք. հիշում եմ միայն այն, վոր այնտեղ մնացինք յերկու ամսի չափ, գուցե և պակաս: Վրա հասագ 1920 թվի ապրիլի 4-ի—5-ի չարաբաստիկ նախորյակը:

Ապրիլի 4-ի նախորյակին, յերեկոյան, ճապոնացիներն սկսեցին կասկածելի կենդանություն ցույց տալ: Դալիս եյին մեր շտաբը, շատ սիրալիր և քաղաքավարի յեղանակով խոսում եյին. սկսեցին շրջել մեր զորանոցները և շաքար, թեյ, փիսկի (ողի) բաժանել պարտիզաններին, մեկ խոսքով՝ սկսեցին կասկածելի այցելություններ անել: Մենք անհամազստացանք և անմիջապես հատուկ մարդիկ ուղարկեցինք այն տեղերն, ուր մեր զորամասերն եյին, տալով այնպիսի դիրեկ-

տիվ, վոր ճապոնացիներին զորանոցներից գուրս չանեն, կոպիտ խոսքեր չասեն, բայց մինույն ժամանակ վոչ մի նվեր նրանցից չընդունեն, նմանապես հետեւին, վոր մեր տղերքը վոչ միայն ճապոնական, այլև մեր արագը չխմեն: Մենք գիտեյինք, վոր ճապոնացիների այսպիսի խաղաղասիրական արամադրությունը նրանց այս կամ այն կեզտոտ և նենդավոր քայլի առաջին նշանն է: Պետք ե ասել, վոր այս գեպքից յերեք որ առաջ, տակտիկական վարժությունների պատրվակով, ճապոնացիները հարձակում գործեցին մեր զորանոցների վրա: Մեր զորանոցներում հաշեց տագնապի աղջանշանք. պարտիզաններն իսկույն ցրիվ շարքերով պառկեցին ճապոնական շղթայի գիմաց, և 15—20 ըովե այլպես մնալուց հետո յերկու կողմերն ել իրենց տեղերը ցըվեցին:

Մենք ճապոնացիներին հարցնում եյինք, թե ինչ ե նշանակում այս: Նրանք ժպտալով ասում եյին. «Վոչինչ, վոչինչ, դա մեր զորամասերի տակտիկական վարժությունն ե»:

Բայց այդ պրովոկացիա յեր, վորի համը գեռ լրիվ չեյինք ճաշակել. սակայն մենք կանխեցինք այդ պրովոկացիան, կատեգորիկ կերպով արդելելով մեր զորքերին կրակ բաց անել ճապոնացիների վրա, յեթե սրանք իրենք չսկսեն:

Ապրիլի 3-ին շատ հուզիչ լուրեր սկսեցինք ստանալ Վլագիվոստոկից և նիկոլսկ—Ռւսուրիւ-

կից, իսկ ապրիլի 4-ին, գիշերը, Վլադիվոստոկի հետ մեր կապը խզվեց: Ապրիլի 5-ին, առավոտյան ժամը՝ 9-ին ճապոնացիներն սկսեցին կրակել ամբողջ Խաբարովսկի քաղաքի վրա թնդանոթներից, զնդացիրներից ու հրացաններից, առանց նույնիսկ իրենց պահակներին փողոցներից հանելու: Կրակում եյին դպրոցների վրա, բանվորների խղճուկ խրճիթների վրա, անցորդների վրա, փորոնք շուկա եյին գնացել գնումներ անելու համար. կրակում եյին քաղաք յեկած գյուղացիների վրա, կրակում եյին ամենքի վրա և մասնավանդ նշան եյին բռնում նրանց, փորոնց հագինը զինքորականի զգեստ եր կամ պարտիզանի զգեստի յեր նման:

Հրետանային կենտրոնական կրակը ճապոնացիներն ուղղել եյին մեր շտարի վրա, վոր գտնվում եր նախկին կաղետական կորպուսում (դպրոցում): Հենց այս նախկին կաղետական կորպուսի շենքում ապրում եր նաև իմ ընտանիքը: Հրացանաձգության սկզբում յես գործկոմում<sup>1</sup> եյի մի խումբ զինված նավաստիների հետ. նրանք տասը հոգի եյին: Հրացանաձգությամբ պաշտպանվելով, մենք՝ ցանցառ շղթա կազմած՝ մեկ թաղից մյուսն անցանք և արդեն գիշերով հասանք կաղետական կորպուսին, Մոտենալով կաղետական կորպուսին, վոր լուսավոր-

ված եր հրկիզված ուազմական մթերանոցների շողերով, յես տղերանց ասացի. «Դուք անցեք Ամուրի ձախ ափը: Մեր զորամասերը միայն դեպի այն կողմն են նահանջելու: Իսկ յես կփսամ շտար, կվերցնեմ կողջս և նույնպես դեպի այն կողմն անցնելու ճանապարհ կրանամ»: Մենք, իրար ձեռք մեղմեցինք, բաժանվեցինք, չկորցնելով վոշ մի ընկերոջ:

Մոտավորապես գիշերվա ժամի մեկին յես մտա կաղետական կորպուսի կարմիր խաչի շենքը: Այս շենքում յես գտա կնոջս<sup>1</sup> և ուրիշ միքանի ընտանիքներ՝ ամենքը ցնցված, տանջված. Նրանք ամբողջ որը նստել եյին ճապոնական հրետանիների կրակի թնդյունի տակ: Յես միտք ունեյի հանգիստ առնել կարմիր խաչի շենքում, բայց գլխավոր բժիշկը յեվավ յեվ ասաց. «Ընկեր Պոստիշեվ, յեթե ձեզ այստեղ գտնեն, մեզ ամեն- կլոտորեն. մինչեռ արտեղ յերկրորդ հար- քիս կլոտորեն. մինչեռ արտեղ յերկրորդ հար- քում տասնի չափ ծանը հիմանդներ կան պար- տիզաններից և այն գնդերի զինվորներից, վորոնք մեր կողմն են անցել նախկին կոլչակյան բանա- կում կողմն միջի այլոց, միաժամանակ հաղորդում կից» (ի միջի այլոց, միաժամանակ հաղորդում եմ, վոր կոլչակյան բանակից մեր կողմն անցած եմ, վոր կոլչակյան բանակից եյին Խաբարովսկիում, այս գնդերը, վոր գտնվում եյին Խաբարովսկիում, անցանք կորուստներ եյին ունեցել նրանք հերոսա- բար եյին կովկել ճապոնացիների դեմ):

<sup>1</sup> Բ: կ. Պոստուգովոկայալին:

<sup>1</sup> Գործկոմի կացարանը գտնվում եր Մուրավյովո-Ամուր- յան փողոցի վրա, վոր շատ հեռու յեր կաղետական կորպուսից:

Յես վերցրի կնոջս և միասին գնացինք մեր  
քնակարանը: Բնակարանս լերորդ հարկում եր:  
Յես կողպեցի բոլոր դռները: Յերկուսս ել տանջ-  
ված՝ խոր քնով քնեցինք: Մենք ուզում եյինք  
քնել միայն մինչև լուսաբացը, վորպեսզի ծեզն  
սկսվելուն պես զգուշությամբ գնանք դեպի Ամուր  
գետը և սառած գետի վրայով անդնենք ձախ  
ափը, ուր, իմ կարծիքով, պետք ե կենտրոնացած  
լինելին մեր նահանջող զորքերը: Բայց մենք  
այնքան խոր քնել եյինք, վոր միայն առավոտը  
դարձնեցինք: Յես աչքերս բաց արի, տեղիցս  
վեր թռա, մոտեցա լուսամուտին, տեսնեմ—ձա-  
պոնացիները շրջապատել են մեր շենքը: Կինս  
հասկացավ բանն ինչումն ե: «Պահվիր,—ասում ե  
ինձ,—պահվիր ծխնելույզում. գուցե այնտեղից  
կարողանաս չերդակ բարձրանալ ու առժամա-  
նակ մնալ այստեղ, թե չե քեզ կսպանեն: Ճապո-  
նացիք անպատճառ այստեղ կգան, վորովհետեւ  
աղախինը գիտե, վոր մենք այստեղ ենք»: Իսկ այս  
աղախինն առաջ ծառայում եր բնակարանի նոսխ-  
կին տիրոջ մոտ, վոր կոլչակյան բանակի մի  
գնդապետ եր: «Նա կիմացնի ճապոնացիներին,  
վոր այստեղ ենք, նա տեսավ մեր այստեղ գալը»,  
հուզմունքով ասում եր կինս և աշխատում: Եր  
համոզել ինձ, վոր պահվելն անհրաժեշտ ե: Յես  
ժպտալով ասացի նրան: «Զուր ես անհանգիստ  
լինում, պահվելս չի ոգնի: Այ, յեթե դու կարո-  
ղանաս հեռանալ այստեղից, այն ժամանակ յես

պինդ կկողպեմ դուռը և հենց վոր ճապոնացի-  
ները փորձ անեն մտնել և բռնել ինձ, կսկսեմ  
պաշտպանվել-վողջնրանց ձեռքը չեմ ընկնի»:  
Նա բացասական ձեռվ գլուխը շարժեց և ասաց-  
«Յես գիտեմ ճապոնացիների վայրագություն-  
ները, յես գիտեմ ինչպես նրանք բռնաբարում  
են կանանց, ինչպես նրանք ծանակում են նրանց:  
Քեզանից չեմ հեռանա, քեզ հետ կմեռնեմ»:

Յես չեյի կարող ստիպել, վոր նա հեռանա-  
ասենք՝ արգեն ուշ եր: Պայմանավորվեցինք այս-  
պես: Հենց վոր առաջին փորձն անեն ներս խու-  
ժելու, մենք պետք ե կըակելով պաշտպանվենք  
և, առաջին իսկ անհաջողության դեպում, ինք-  
նասպանությամբ վերջ դնենք մեր կյանքին: Յես  
զգում եյի իմ անհուսալի վիճակը, տեսնում եյի,  
վոր ինձ համար ուրիշ յելք չկա: Ինձ զբաղեց-  
նողը միայն այն միտքն եր, վոր ճապոնացիներին և  
սպիտակգվարդիականներին թույլ չտամ չարչա-  
րել կնոջս: Իսկ դրա համար հարկավոր եր առաջ  
նրան սպանել, բայց այնպես, վոր նա չիմանա  
նրան սպանել, պահվել հետեւի նրան: Այդ  
և զգա այդ: Յես սկսեցի հետեւի նրան: Այդ  
միջոցին սանդուղքի վրա քայլերի ճայներ լսվեցին:

Մոտեցա գեպի սանդուղքը տանող լուսա-  
մուտին: Լուսամուտը վանդակապատ եր ու վա-  
րագույրով ծածկված, հետևաբար այդտեղից  
մտնել չեյին կարող: Տեսնեմ—սանդուղքով բարձ-  
րանում են յերկու ճապոնացի և մեկ ուսւա, ըստ  
յերկույթին՝ սպիտակգվարդիական: Նրանք մոտե-

ցան ու սկսեցին դուռը թակել. Մենք լուռ ենք, Փորձ են անում դուռը բանալու: Մենք լուռ ենք: Այն ժամանակ նրանք հետ դարձան և միքանի բոպեյից նորից յեկան: Բայց այս անդամ չորսը ճապոնացի եյին և յերկուսը ուռւս. նրանք բերել եյին նիզի նմանող մի գործիք: Կինս մոտեցավ բակը նայող լուսամուտին: Այդ խոկ պահին յես ուղում եյի ձեռքս բարձրացնել և ատրճանակս ուղղել նրա կողմը, բայց նա հանկարծ գոչեց. «Պարտիզանները»: Ատրճանակը ձեռքիցս ընկալ. վագեցի դեպի նա, տեսնեմ—մոտ յերկու տառնյակ պարտիզաններ՝ ցանցառ շղթա կազմած՝ վագե-վազ կորպուսի բակն հն անցնում: Ճապոնացիներն իսկույն հեռացրին այդ շենքը շրջապատող իրենց զորացվթան, Բնակարանիս դուռը ջարդել ուղող ճապոնացիները մեր սանդուղքով արագորեն ներքի վագեցին:


Ճապոնական շղթան՝ արագ կերպով մարտական փոքրիկ զորայուն կազմելով՝ հետապնդեց պարտիզանների այս փոքրիկ շղթային:

Վերցնելով ատրճանակս, բաց արի գուռը, և կնոջս թեանցուկ՝ դուրս թռա. Միքանի ըոսպեյից մենք կադետական կորպուսի բակումն եյինք: Արագ քայլերով հիվանդանոց ուղղվեցինք: Հիվանդանոցի ներքին հարկն արգեն այրվում եր: Նրանք, ովքեր կարող եյին հնուանալ յերկրորդ հարկից, արգեն դուրս եյին յեկել այստեղից. մնացել եյին միայն միքանի ծանր վիրավորներ, վորոնք

պառկած անքում եյին: Այստեղ հավաքված եղ մի ութը մարդ, վորոնք ինձ պես պատահաբար ընկել եյին այստեղ և պատսպարվում եյին ճապոնացիների և սպիտակների հետապնդումներից: Մենք վորոշեցինք վիրավորներին տեղահան անել ուղղակի մահճականներում պառկած: Յես մարլայով կապեցի ձախ աչքս՝ դեմքս մի քիչ քողարկելու համար: Մարլայի կտորից թեներիս փաթան կապեցինք, վորի վրա կարմիր մատիտով գծեցինք կարմիր խաչի նշանը: Տանում ենք վիրավորներին. մեզ հետ միասին տանում եր նաև կինս: Բայց խսկապես վոչ թե տանում եր, այլ հազիվ-հազ քայլերն եր փոխում: Այսպես անցանք ճապոնական մի զորամասի մոտեց, մյուս զորամասի մոտից. մեզ ձեռք չեյին տալիս: Մեր կողքում վազվզում եյին սպիտակգվարդիական սպանները. բայց վոչ-վոք մեզ վրա ուշազրություն չեր դարձնում, վորովհետեւ հենց այդ ժամանակ քաղաքացիական Կարմիր խաչը հավաքում եր վիրավորներին և տեղափոխում եր քաղաքացիական յերկրորդ հիվանդանոցը, վոր գտընվում եր Ամուրի ափին. խսկ ճապոնացիներն ու սպիտակգվարդիականները մեր նահանջող զորամասներով եյին զբաղված:

Նրանք գեռ չզիտեյին, թե վնր կողմ են գնացել մեր մասները և թե բոլոր մասներն արդյոք դուրս են յեկել քաղաքից: Մենք հիվանդանոց հասանք վողջանդամ և անվաս:

Այստեղ մոտ լոթանասուն մարդ կար մերոնցից։ Ամենքն սպասում եյին, վոր յերեկոյան Ամուրի աջ ափից ձախն անցնեն։ Յերեկով գնալն անկարելի յեր, վորովհետեւ ճապոնացիներն ամբողջ ժամանակ կրակն ուղղել եյին գետի վրա։ Ինձ տանջողն այն միտքն եր միայն, թե ինչ անեմ կնոջս։ Ապրիլ ամսի մեջ քարշ տալ նրան Ամուրի մյուս ափն անցնելու, յերբ արդեն սառուցը չի զիմանում, յես չելի կարող, վորովհետեւ նա հղության վերջին որերումն եր։ Ճիշտ ե, քաղաքում ապրում եր կնոջս մայրը, բայց կնոջս հոժար կամքով ինձանից հեռացնելու վոչ մի հնարավորություն չկար, նա ինձ չեր ուղում թողներ։ Այն ժամանակ խորամանկություն բա։ Նեցրի։ Յես սսացի նրան։ «Սաստիկ սոված եմ, գոնե հաց ճարելիր մի տեղից»։ Նա զնաց հաց ճարելու, իսկ յես՝ այդ պահին Ամուրի գահավեժաջ ափից իջնելով՝ կանգնեցի սառուցի վրա։ Արագ բայլերով գնում եյի սառուցներով։ Հազիվ մի վոտքս հանում եյի սառցածակից, մյուս վոտքիս տակ եր խորտակվում սառուցը։ Մերոնցից այլևս տասը մարդ վորոշեցին փախչել։ Ճապոնացիներն սկսեցին կրակել մեր վրա։ Հետեւում գտնվողներից մեկին վիրավորեցին, յես լսում եյի նրա տնքոցը, բայց առանց հետ նայելու շարունակում եյի գնալ։ Յերբ հասա ձախ ափը, յերբ արդեն վտանգն անցել եր, այն ժամանակ միայն նստեցի, վոր հանգստանամ։ Այն ժամանակ



միայն հիշեցի, թե ի՞նչպես անցավ այն փորձանքը, յերբ սեփական ձեռքերովս ուղում եյի հրացանազարկ անել կնոջս, թե ի՞նչպես պատահաբար և ինձ համար անուղասելի կերպով կարողացա դուրս պրծնել այն թակարդից, վորի մեջ հոժարակամ ընկել եյի, կիսս, ինչպես ինձ հետո պատմեցին, յերկար փնտուել եր ինձ: Հետո իմ ընկերներիցս մեկից իմացել եր, վոր յես փոքրաթիվ ընկերներով, դեռ որը չմթնած անցել եյի ձախ ափից: Ընկերներն ամեն կերպ հանգստացրել եյին նրան: Նա գնացել եր մոտ մոտ իսկ յես յեկա վաղիմիրովկա զյուղը: Այնտեղ նա հանջած մեր զորամասերին գտա քառային վիճակի մեջ, ցանուցիր յեղած, կազմալուծված: Մեր պարտիզաններից մոտ յերկու հազար մարդ կար այնտեղ հավաքված:

Յեկ ահա այս յերկու հազար ցանուցիր յեղած պարտիզաններն եյին, վոր հետագայում հիմքը դարձան՝ Հեռավոր Արևելքում կարմիր բանակ կազմակերպելու համար: Նրանք մինչև 1922 թիվը հերոսաբար պաշտպանեցին արևելյան ռազմական ճակատը (ամուրյան ուղղություն) ճապոնացիների, կապելականների և կալմիկովի ջոկատի դեմ: Նրանցից շատերը մասնակցել են Վաղիմոստոկն սպիտակների և ճապոնացիների ձեռքից պատելու գործում: Նրանք վճռական դեր են խաղացել Մեմյոնովի բանդան վոչնչացնելու գործում:

Իմ այն յենթադրությունը, թե իվան Պավլովիչ Շեվչուկի ջոկատը մեր մնացած բոլոր զորամասների հետ Խաբարովսկից պետք են նահանջի Ամուրի ձախ ափը, չարդարացավ: Նա նահանջեց դեպի Կարմիր գետակը և իր ջոկատով այնտեղ հաստատվեց: Արդեն հետագայում, յերկու ամսից հետո, յերբ Ամուրի ձախ ափին պարտիզանական ցանուցիր մասերից կադմվեց կանոնավոր կարմիր բանակի բավական հզոր բոռունցքը, իվան Պավլովիչ Շեվչուկը վճռեց անցնել Ամուրի ձախ ափը: Նա լաստեր շինեց, նրանց վրա բարձեց իր հրետանին, վոր հաջողել եր ձեռք գցել ապրիլի 5-ին Խաբարովսկից նահանջելիս: Դրանից առաջ ում եր պատկանում հրետանին, չգիտեմ: Գիտեմ, վոր իվան Պավլովիչ Շեվչուկի ջոկատում, բացի «լեռնականից», ուրիշը չկար: Շեվչուկի հրետանին, իր մարդկանց հետ, նավով մեզ հասավ: Հրետանին ընդունեցինք, իսկ հետի մարդկանց խոր թիկունքը ճամբեցինք: Ուղիղն ասած, միքիչ կասկած ունելինք այդ մարդկանց կարգապահության վրա: Իսկ կարգապահության, այսինքն դիսցիպլինայի նկատմամբ մենք այն ժամանակ շատ խստապահանջ եյինք: Յերկու որից հետո ինքը Շեվչուկը ևս ժամանեց ճակատի շտաբը:

Առաջին հարցը, վոր իվան Պավլովիչն ուղղեց ճակատի հրամանատար ընկ. Սերիշևին, այս եր. «Ուր ե իմ հրետանին»: Սերիշևը պատաս-

խանեց. «Հրետանին պատկանում ե բանվորներին ու գյուղացիներին։ Այժմ հրետանին մարտական ճակատամասումն եւ Մարտական ճակատամասի պետը Ֆլեգոնտովն ե, հետևաբար այսոր նրա կարգադրության տակ ե հրետանին։ Յեթե վաղը մարտական ճակատամասի պետը դու յեղար, հրետանին ել քո կարգադրության տակ կլինի Համաձայն ես», — ժպտալով հարցրեց Սերիշեր, Իվան Պավլովիչը լուռ զլուխը շարժեց և իսկույն պատասխանեց. «Իհարկե համաձայն եմ։ Այսպես Իվան Պավլովիչը մնաց Ամուրի ձախ ափին և առաջկա նման քաջությամբ կը պովում եր ճապոնացիների և սպիտակների հետ խորհուրդների իշխանության համար։ Ի. Պ. Շեվչուկը մինչև որս դեռ ծառայում ե կարմիր բանակի շարքերում։

Ահա համառոտ և թոռոցիկ կերպով պատմեցի ձեզ մեր փառապանծ, մարտական, բոլցերի յան 1-ին տունգուզական պարտիզանական ջոկատի պատմության միայն մի մասը և զուգընթացաբար նաև ընկ. ընկ. կոչների, Բոյկո-Պավլովի և ուրիշների ջոկատների մասին։

Առաջ կազմվեցին պարտիզանական ջոկատներ, ապա կանոնավոր կարմիր բանակը, վործնունդ առավ Ամուրի ձախ ափին Սերձծովյան շրջանի (Պրիմորյե), Ամուրյան մարզի պարտիզանական ջոկատներից, իսկ հետո կազմվեց Հեռուավոր Արևելքի ժողովրդա-հեղափոխական հան-

րապետությունը, ու մեր կանոնավոր կարմիր բանակից, վոր ստեղծված եր նախկին պարտիզանական ջոկատներից, սկսեցին վերակազմվել ժողովրդա-հեղափոխական բանակ։ Հիշում եմ վորքան վիրավորանք պատճառեց, վորքան զբժգություն (և հաճախ՝ լուրջ զժգոհություն) առաջ բերեց այն հանգամանքը, վոր կարմիր բանակայիններին վերանվանեցին ժողովրդաբանակայիններ։ Մեզ հրամայեցին պոկել-հանել մեր վիսարկների աստղիկները, փոխարենը կպցնել կոկարդներ, իսկ թերիս՝ ոռմբածե նշաններ կարել (շեղանկյունավոր նշաններ—Ծ. Թ.). «Ուրեմն ինչ դուքս յեկավ, — ասում եյին մեզ կարմիր բանակայինները, — ինչի համար կովեցինք, ինչի համար վոտքի կոխան դարձրինք անծայրածիր տայգան, ինչի համար արյուն թափեցինք, — վոր վերջիվերջո կարմիր աստղը փոխենք առաջկա կոկարդի հետ, փողորմելի՝ ոռմբի՝ հետ»։ Կային և այսպես ասողներ. «Դուք մեր թերին ոռմբիկներ եք կարում, վոր հետո կամաց-կամաց գեպի ուսերս տեղափոխեք նրանք ու մեզ վերադրձնեք առաջկա ուսագերին։ Վհչ, ընկերներ, ձեր այս գործից լավ բան չի դուքս գա. գեշ հոտ, հնի հոտ ե փշում դրանից»։ Մենք նրանց պատասխանում եյինք, «Ընկերներ, դա Մոսկվայի կարգադրությունն ե, իսկ դուք զիտեք, վոր բոլոր գործերը ղեկավարում ե բանվորների ու գյուղացիների առաջնորդը, մեր կուսակցության առաջնորդը».

ընկ. Լենինը»։ Միայն այս եր, վոր նախկին պարտիզաններին ստիպեց հնազանդել վերանվանման հրամանին և փոխել տալ իրենց արտաքին տեսքը, այսինքն աստղիկի տեղ կոկարդ և ռոմբ ունենալ։ Վահ նվազ նշանակություն ուներ և այն, վոր կանոնավոր գնդերի զլուխ կանգնած եյին հին, փորձված բոլցիկ-պարտիզաններ, վորոնց ճանաչում եյին, վորոնց անսահման հավատում եյին։

Պարտիզանական կոիվը Հեռավոր Արևելքում վեհ կոիվ եր։ Խորհուրդների իշխանության համար, սոցիալիզմի համար, Լենինի կուսակցության ղեկավարությամբ բանվորների ու գյուղացիների մղած ամբողջ պայքարի ամենափայլուն եջերից մեկն եր այս։ Պրոլետարական պատմագիրներն անշուշտ կկարողանան նկարագրել բանվորների ու գյուղացիների այս վեհ պայքարը, վոր մղվում եր կոմոնիստական կուսակցության ղեկավարությամբ։ Նրանք կպատմեն և փաստաթղթերով կհաստատեն այս պայքարում հանդես բերված անձնվիրությունը և հերոսությունը, ինչպես նաև պայքարողների ուժեղ հավատը դեպի ապագան։ Փաստաթղթերը, մեծ պայքարի վկայությունները պահպատմ են հզոր և խոր տայգայում։ Այնտեղ, տայգայումն են ցըված հարյուրավոր և հազարավոր յեղբայրական գերեզմանական թմբերը, ընկած պարտիզանների շիրիմները։

Սրանք, այս շիրիմները, անհայտ իերոգլիֆներ՝ չեն լինի մեր պրոլետարական պատմագիրների համար։ Սրանք հերոսական պայքարի կմնդանի փաստերն են, անմիջական վկաներն են։ Սրանք շատ բան ունեն պատմելու։ Հավերժական հիշատակ ընկածներին, փառք կենդանի մացածներին, նրանց, վորոնք ՀԿ(ը)Կ ղեկավարությամբ կովում են պրոլետարիատի լիակատար հաղթանակի համար։



<sup>1</sup> Խերազիփ կոչվում են հին յեգիպտական մեհենական նշանագրերը. այժմ նշանակում են նաև անընթեռնելի գրվածք (Մամ. քարգմ.)։



4089  
Ответ. редактор Б. Г. Потикиян  
Тех. редактор Д. М. Джинибалаин

Уполномочен № О-466. Сдано в набор 9 февраля 1937 г.  
Подписано в печать 15 марта 1937 г. Формат Б-5. Объем  
 $2\frac{1}{4}$  п. л. Тираж 2000. Заказ № 291.

Типография Краевого Армянского Издательства „ГРО“.  
Ростов—Дон, Ворошиловский пр. № 27.



ԳՐԱԾ 60 ԿՈՎ.  
Цена 60 коп.

На армянском языке

П. ПОСТЫШЕВ  
ПЕРВЫЙ ПАРТИЗАНСКИЙ  
ТУНГУЗСКИЙ ОТРЯД

АЗОВО - ЧЕРНОМОРСКОЕ КРАДЕВОЕ  
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО „ГРО“  
Ростов н-Д, Ворошиловский пр. № 27

7

14988